Խմբագիր՝
բանասիրական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր Լաուրա Մուրադյան
Մասնագիտական խմբագիր՝
մանկավարժական գիտությունների
թեկնածու, դոցենտ Արմենուհի Ավագյան

Initiative for inclusion

World Vision
ՀԱՅԱՍՏԱՆ

Սյուզաննա Պետրոսյան

ՆԵՐԱՌԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ԳՈՐԾՆԱԿԱՆՈՒՄ

Երևան- 2021

Ներառական կրթությունը գործնականում

(ուսումնամեթոդական ձեռնարկ)

Ձեռնարկը երաշխավորվել է ԿԳՄՍՆ կողմից (N 1665-Ա/2) որպես օժանդակ նյութ՝ հանրակրթական ուսումնական հաստատությունների ուսուցիչների, մանկավարժա-հոգեբանական աջակցություն տրամադրող մասնագետների համար:

Հեղինակ՝ Սյուզաննա Պետրոսյան

Սոցիալական մանկավարժ, վարքային մասնագետ

Խմբագիր՝

բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Լաուրա Մուրադյան

Մասնագիտական խմբագիր՝

մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Արմենուհի Ավագյան

© Պետրոսյան Ս. Ս., 2019

Երևան 2021

Դպրոցի ուսուցիչներն ունեն այնպիսի իշխանություն, որի մասին կերազեին վարչապետները:

Ուինսթոն Չերչիլլ

Ձեռնարկը նախատեսված է ուսուցիչների, բազմամասնագիտական թիմի անդամների և կրթություն իրականացնող բոլոր մասնագետների համարՈՒնպատակ ունենալով օգնել՝ իրականացնելու և ամրագրելու գիտականորեն հիմնավորած լավագույն միջազգային փորձը դասարանում սովորող տարբեր կարիքներ ունեցող երեխաների համար և ներդնելու կրթություն բոլորի համար տեսլականը: Ծրագրին մեթոդաբանական և մասնագիտական աջակցություն է ցուցաբերել հատուկ կրթության փորձագետ պրոֆեսոր Մայքլ Քասլբերին: Ձեռնարկում տեղադրված լուսանկարները կատարվել են Երևանի թիվ 163 հիմնական դպրոցում և «Աուտիզմ ազգային հիմնադրամի» «Իմ ուղին» վերականգնողական կենտրոնում:

Ձեռնարկը ստեղծվել է ԱՄՆ պետքարտուղարության Հասարակայնության հետ կապերի գրասենյակի դրամաշնորհի շրջանակներում: Ձեռնարկում արտահայտված է հեղինակի դիրքորոշումը, որի համընկնումը ԱՄՆ պետքարտուղարության դիրքորոշման հետ պարտադիր չէ:

Ձեռնարկի վերահրատարակումը իրականացվել է Վորլդ Վիժն Հայաստանի գրասենյակի և «Նախաձեռնություն հանուն կրթական և սոցիալ-իրավական ներառման» ՀԿ-ի համագործակցության շրջանակներում:

Բովանդակություն

ԲԱԺԻՆ 1

Ներառական կրթություն 5

Ընդհանուր տեղեկություն զարգացման տարբեր խնդիրների մասին 6

ԲԱԺԻՆ 2

Գնահատումը ներառական կրթության համակարգում.....16

Գնահատման տեսակները.....18

ԲԱԺԻՆ 3

Կրթական կարիքներին արձագանքման և միջամտության համակարգը..... *28*

ԲԱԺԻՆ 4

Դասի կազմակերպման առանձնահատկությունները ներառական կրթության համատեքստում.....33

Վարքի կառավարում և սոցիալական ներառում.....38

ԲԱԺԻՆ 5

***Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտների ընթերցանության և գրելու կարողության գնահատում:*.....52**

Ուսուցման տեխնիկաներ.....55

Հեղինակի կողմից

Աուտիզմ ունեցող երեխաների հետ երկարատև իրականացրած աշխատանքները ստիպում են ընդունել այն փաստը, որ որքան էլ երեխան ստանա որակյալ անհատականացված միջամտություն, միևնույն է, առանց հասարակության մեջ ներառվելուի ինչ- որ բան միշտ մնում է բաց և ոչ լիարժեք: Հետևաբար, դպրոցը շատ երեխաների համար այն միակ սոցիալական միջավայրն է, որտեղ կարող են շփվել հասակակիցների հետ, ձեռք բերել ընկերներ և զգալ իրենց հասարակության մի մասնիկը: Ցավոք, այսօրվա դպրոցը ոչ միշտ է կարողանում լիարժեք իրականացնել իր այդ գործառույթը և հիրավի կարիք ունի մեթոդաբանական ուղղորդման և աջակցության[1]: 2016 թվականին ԱՄՆ դեսպանատան աջակցությամբ իրականացված պիլոտային ծրագիրը Երևանի թիվ 163 դպրոցում հնարավորություն տվեց իրականացնելու ներառական կրթության արդյունավետ մոդել՝ կիրառելով նոր՝ գիտականորեն հիմնավորված մոտեցումներ և տեխնիկաներ: Համագործակցությունն ամերիկացի փորձագետ պրոֆեսոր Մ. Քասլբերիի հետ հնարավորություն ստեղծեց ներդնելու ամերիկյան հաջողված փորձը և կիրառելով նոր տեխնիկաներ և մեթոդներ՝ ստեղծել ներառական միջավայր դասարանում սովորող բոլոր աշակերտների համար:

Վերոհիշյալ ծրագիրը ցույց տվեց նաև, որ ուսուցիչները պատրաստակամ են կիրառելու նոր տեխնիկաներ և մեթոդներ, ինչը կարող է անգնահատելի մեծ դեր ունենալ երեխաների կրթության գործընթացում: Այդ են վկայում վեցերորդ դասարանի դասղեկի խոսքերը. «Երբ ես իմացա «Ուսուցում ընկերոջ հետ» տեխնիկայի մասին, անմիջապես կիրառեցի դասի ընթացքում և նկատեցի, որ դասարանում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներն աշխուժորեն ներգրավվեցին դասապրոցեսին, իսկ դասընկերները սկսեցին ավելի շատ շփվել և օգնել նրանց»: Այդ ծրագիրն ապացուցեց նաև այն փաստը, որ ուսուցչին մեթոդաբանական գործիքներով և տեխնիկաներով զինելն ուղղակիորեն դրական է անդրադառնում ուսումնական գործընթացի վրա՝ նպաստելով ուսուցում բոլորի համար տեսլականի իրականացմանը:

Ունենալով մեծ ձգտում ինչ -որ չափով թեթևացնելու ուսուցիչների ուսերին դրված դժվար և շատ կարևոր առաքելությունը՝ այս ձեռնարկում փորձել եմ մասնագիտական փորձի հետ զուգահեռ հավաքագրել մեթոդներ և տեխնիկաներ, որոնց արդյունավետությունը գիտականորեն հիմնավորված է, և որոնք մեթոդաբանական աջակցություն կապահովեն այն բոլոր ուսուցիչներին, ովքեր ցանկանում են ոչ միայն ֆիզիկական ներկայություն, այլ նաև որակյալ կրթություն ապահովել դասարանում սովորող բոլոր երեխաների համար:

Այս ձեռնարկի ստեղծման հիմնական նպատակն է՝ տարածել դրական փորձը և դարձնել այն օգտակար ռեսուրս ուսուցիչների համար, քանզի ուսուցիչը միշտ ցանկանում է օգնել դասարանում նստած ետ մնացող աշակերտին, աշակերտն էլ իր հերթին միշտ սպասում է, որ իրեն օգնեն, և վերջապես տրված ճիշտ առաջադրանքը ***կարող է փոխել ամեն ինչ:***



1 Approximation of Inclusive Education in Armenia to International Standards and Practices, Policy Paper, A. Anapiosyan, Yerevan 2014

Բաժին 1

Ներառական կրթություն

Ներառական կրթությունը սովորողների համար կրթություն ստանալու հիմնական ռազմավարությունն է, որի նպատակն է ձևափոխել կրթական ծրագրերը և վերացնել խոչընդոտները՝ հաշվի առնելով սովորողների անհատական կարիքներն ու պահանջները[2]:

Պատմական ակնարկ : Հայ ժողովուրդը պատմության մեջ հայտնի է խոցելի խմբերի հանդեպ իր ունեցած մարդասիրական մոտեցումներով: Հնում եկեղեցին իր վրա է վերցրել հաշմանդամներին և կարիքավորներին կրթելու, հոգ տանելու և ներառելու մեծ գործը: Սակայն խորհրդային տարիներին պատկերը փոխվեց. բացվեցին հատուկ հաստատություններ, և մարդիկ առանձնացվեցին հասարակությունից: Ընտանիքները տարիներով թաքցնում էին նման երեխաների գոյությունը՝ համարելով այն ամոթալի դժբախտություն: Բարեբախտաբար, այժմ պատկերը բավականին այլ է, և զգալի են դրական տեղաշարժերը հասարակության ընկալման և վերաբերմունքի մեջ: Անշուշտ, ոլորտում նշանակալի բարեփոխումներ են կատարվել՝ շնորհիվ մի շարք հասարակական, այդ թվում միջազգային կազմակերպությունների (ՄԱԿ-ի մանկական հիմնադրամ, Առաքելություն Արևելք, Հույսի կամուրջ), ինչպես նաև գործին նվիրյալ անհատների և ծնողների, ովքեր պայքարել են իրենց երեխաների կրթության իրավունքի և կյանքի որակի բարելավման համար:

2 Convention on the Rights of Persons with Disabilities (CRPD)Article 24 – Education DOi: https://www.un.org/development/desa/disabilities/convention-on-the-rights-of-persons-with-disabilities/article-24-education.html

Հայաստանի կառավարությունը ևս դրական քայլեր է ձեռնարկել երեխաների կրթության իրավունքն իրացնելու նպատակով, այս փաստն է վկայում ՀՀ Ազգային ժողովի 2014 թվականի դեկտեմբերի 1-ին ընդունված
«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքը (ՀՕ-200-Ն), որով նախատեսվում է հանրակրթության համակարգում անցում **կատարել համընդհանուր ներառական կրթության**[3]: Համաձայն օրենքի՝ մինչև 2025 թվականի օգոստոսի 1-ը հանրապետությունում կներդրվի համընդհանուր ներառական կրթության համակարգ:

Ըստ օրենքի՝ **ներառական կրթությունը** յուրաքանչյուր երեխայի համար, այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող, զարգացման առանձնահատկություններին համապատասխան, անհրաժեշտ պայմանների և հարմարեցված միջավայրի ապահովման միջոցով կրթական գործընթացին առավելագույն մասնակցության և հանրակրթության պետական չափորոշիչով սահմանված արդյունքի ապահովումն է:

Համաձայն վերոհիշյալ օրենքի՝ **կրթության առանձնահատուկ պայմանների կարիք** ունի «ուսուցման հետ կապված դժվարություններ, այդ թվում ՝ զարգացման ֆիզիկական կամ մտավոր առանձնահատկություններ ունեցող այն *անձը, սովորողը, որի կողմից հանրակրթական հիմնական ծրագրերը յուրացվելու համար անհրաժեշտ են կրթության առանձնահատուկ պայմաններ»:* [4]

Կրթության առանձնահատուկ պայմաններն օրենքով սահմանվում են՝ որպես «հանրակրթական հիմնական ծրագրի յուրացմանը նպատակաուղղված առարկայական ծրագրերի և ուսուցման մեթոդների, ուսուցման անհատական տեխնիկական միջոցների, հարմարեցված միջավայրի, ինչպես նաև մանկավարժական, սոցիալական և այլ ծառայությունների ամբողջություն», Հոդված 3, կետ 10.1[5]:

Կարևոր է նաև նշել, որ ներառական կրթությունը չի վերաբերում միայն հաշմանդամություն ունեցող երեխաների կրթությանը. այն պետք է օգտակար լինի բոլոր երեխաներին և կենտրոնացած բոլորի կրթական կարիքների վրա։Բոլոր սովորողների համար ապահովելով որակյալ կրթություն և սոցիալական ներառում:

Ըստ ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի կատարած հետազոտությունների՝ ներառական կրթությունն օգնում է բոլոր երեխաներին՝ հաշմանդամություն ունեցող և առանց, նաև նպաստում ավելի կայուն, հանդուրժող և բարգավաճ հասարակության կայացմանը:[6]

Ընդհանուր տեղեկություն զարգացման տարբեր առանձնահատկությունների մասին

Այս բաժնում ներկայացված են առավել հաճախ հանդիպող զարգացման առանձնահատկությունների մասին, որոնց մասին բազմիցս հարցեր են տրվել ուսուցիչների կողմից տարբեր հանդիպումների ժամանակ:

Աուտիզմ

2021 թվականի տվյալներով ամբողջ աշխարհում 160 երեխայից մեկն ախտորոշվում է աուտիզմով: Այն 4 անգամ շատ է հանդիպում տղաների, քան աղջիկների մեջ: Համաձայն Հոգեբույժների ամերիկյան ասոցիացիայի կողմից մշակված «Հոգեկան

3 ՀՀ ՕՐԵՆՔԸ «ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=946

4 Նույն տեղում

5 Նույն տեղում

6 Children with Disabilities THE STATE OF THE WORLD'S CHILDREN 2013 EXECUTIVE SUMMARY https://www.unicef.org/publications/files/SOWC2013_Exec_Summary_ENG_Lo_Res_24_Apr_2013.pdf

խանգարումների ախտորոշման և վիճակագրության» ձեռնարկի վերջին տարբերակիցի (այսուհետ՝ ԱԼՁ-V) մանկական աուտիզմին բնորոշ ախտանշաններն են.[7]

1. ***սոցիալական հաղորդակցման և սոցիալական փոխազդեցության բացակայություն. այն է՝***

- երեխաները խուսափում են շփումից, հուզականորեն անտարբեր են, հաճախ չեն արձագանքում նույնիսկ հարազատներին
- մեծ դժվարությամբ են հասկանում և օգտագործում հաղորդակցման ոչ խոսքային ձևերը, այն է՝ աչքի կոնտակտ, ժեստեր, դեմքի արտահայտություն
- դժվարությամբ են մտերմանում կամ ընկերանում, ուշադրություն չեն դարձնում հասակակիցների վրա:

2. ***սահմանափակ և կրկնվող վարքաձևեր, հետաքրքրություններ և գործողություններ, մասնավորապես՝***

- *կրկնվող շարժումներ և խոսք* (խաղալիքները շարում են նույն հերթականությամբ, կրկնում են նույն բառերը կամ հնչյունները, անկանոն շարժումներ են անում, ձեռքով պտտեցնում են առարկաները
- *արարողակարգային վարք, միօրինակ և անփոփոխ միջավայրի պահանջ* (միշտ ձգտում են քայլել նույն ճանապարհով, նույնատիպ սնվել, ինչը, որպես կանոն, խիստ սահմանափակ է: Յուրաքանչյուր փոփոխություն մեծ անհանգստություն և տագնապ է առաջացնում երեխաների մեջ)
- *սահմանափակ հետաքրքրություններ*
- *միջավայրային գործոնների նկատմամբ գերզգայունություն կամ զգայունության պակաս.* այն է՝ վառ լույսեր, աղմուկ, բարձր ձայներ, մարդաշատ վայրեր: Նման միջավայրում այս երեխաները կարող են փակել աչքերը, ականջները, խուսափել ֆիզիկական շփումից:

Ասպերգերի համախտանիշ

Ասպերգերի համախտանիշը ևս բնութագրվում է աուտիզմին բնորոշ սոցիալական շփման և հաղորդակցման դժվարություններով: Այս երեխաների մեջ ևս նկատվում են սահմանափակ հետաքրքրություններ և կրկնվող վարք: Նրանք ինքնամփոփ են և դժվարությամբ են ձեռք բերում ընկերներ:
Սա մանկական աուտիզմից տարբերվում է նրանով, որ այս դեպքում պահպանված է խոսքը, և բացակայում է ճանաչողական զարգացման ընդհանուր հապաղումը:[8] Երբեմն, չունենալով հաղորդակցման տարրական հմտություններ, կարող են բացարձակ ընդունակություններ դրսևորել այլ բնագավառներում՝ մաթեմատիկա, երաժշտություն, ֆիզիկա և այլն:

7 https://www.autismspeaks.org/what-autism/diagnosis/dsm-5-diagnostic-criteria

8 Առողջապահության համաշխարհային կազմակերպության կողմից հրապարակված Հիվանդությունների միջազգային դասակարգում, Տասներորդ վերանայումը (ՀՄԴ-10 Հավելված
ՀՀ էկոնոմիկայի նախարարի
2013թ. սեպտեմբերի 19-ի N 871-Ն հրամանի http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=86263

Գործնական խորհուրդներ ուսուցիչներին

- Ավելի հաճախ խրախուսեք դրական վարքը և
- անտեսեք բացասականը:
- Երեխային խոսքի ընկալման համար լրացուցիչ ժամանակ է պետք, հետևաբար պետք է խոսել պարզ բառերով և նախադասություններով:
- Երեխան դրսևորում է ստերեոտիպային վարքագիծ (ոտքերով խփում է հատակին, գոռում է), երբ հուզված է, ձանձրանում է կամ գտնվում է սթրեսային վիճակում: Յուրաքանչյուր վարք ունի պատճառ, փորձեք հասկանալ պատճառը:
- Հնարավորության դեպքում նախապատրաստեք սպասվելիք փոփոխությունների մասին, կարելի է օգտագործել նկարներ, հերթականությունը հուշող պատկերներ:
- Աշխատելիս շատ կարևոր է ձեռք բերել երեխայի վստահությունն ու մտերմությունը:
- Օգնեք նրան հաղորդակցվել, բայց, որ ավելի կարևոր է, սովորեցրեք հաղորդակցվել այլ երեխաների հետ և հասկանալ դրա նշանակությունը:
- Աուտիզմ ունեցող երեխաները դժվարություններ ունեն սոցիալականացման հետ, քանի որ դժվարանում են հասկանալ, տարբերակել իրականն ու ոչ իրականը, ճիշտն ու սխալը: Այս ամենին կարելի է հասնել՝ փորձելով մուտք գործել երեխայի աշխարհ՝ կոնտակտ հաստատելու, վստահություն ձեռք բերելու միջոցով: Այս ամենից հետո միայն հնարավոր կլինի օգնել նրանց:

Մանկական ուղեղային պարալիզ

Մանկական ուղեղային պարալիզը հանդիպում է հազար երեխաներից երկուսից երեքի մոտ: Այն կենտրոնական նյարդային համակարգի հիվանդություն է, որին բնորոշ են՝ *մկանների վերահսկման դժվարությունները, մկանների լարման(տոնուս) բարձր կամ ցածր աստիճանը,* ռեֆլեքսների անկայունությունը, շարժողական գործառույթների խանգարումը (նստել, կանգնել, քայլել), հավասարակշռությունը պահելու, փոքր շարժումներ կատարելու դժվարությունը (գրիչ բռնել, մկրատով կտրել), արտաբերական դժվարությունները (խոսել, ծամել, կուլ տալ):[9] Տարբեր երեխաների դեպքում այն դրսևորվում է տարբեր ձևերով: Որոշակի դեպքերում երեխաները սովորում են քայլել ճոճվելով, կամ հենվելով մեկ ոտքի վրա, մեկ այլ դեպքում կարող են առաջանալ ձեռքերի կիրառման հետ կապված խնդիրներ, իսկ ծանր դեպքերում երեխան կարող է գամված լինել անվասայլակին:

Այս երեխաների մեջ կարող են նաև նկատվել հուզակամային ոլորտի, վարքի խանգարումներ, տեսողության, լսողության խանգարումներ (ավելի հաճախ՝ շլություն): Դպրոցում նրանք արագ են հոգնում, դժվարանում են կենտրոնանալ տրված առաջադրանքի շուրջ:

9 https://www.cerebralpalsy.org/about-cerebral-palsy/sign-and-symptoms

Գործնական խորհուրդներ ուսուցիչներին

- Մանկական ուղեղային պարալիզ ունեցող երեխաների հետ աշխատանքի հիմնական մարտավարությունն է՝ խոսել կարճ և հստակ:
- Նպատակահարմար է սահմանափակել հրահանգների թիվը. այս դեպքում աշակերտն առավել հնարավորություն կունենա կատարելու դրանք, քանի որ դժվարանում է կենտրոնանալ և միաժամանակ հետևել մի քանի հրահանգների:
- Դասարանում մեծ նշանակություն ունի երեխայի դիրքն ու կեցվածքը. մկանային լարվածության պատճառով երեխաները արագ հոգնում են, իսկ եթե երեխան իրեն ֆիզիկապես հարմարավետ զգա, ապա ավելի հեշտ կկարողանա յուրացնել նյութը:
- Պետք է տալ հաճախակի դադարներ, թույլ տալ շարժվել, հաճախակի փոխել դիրքը:[10]
- Օգտագործեք հատուկ հարմարեցված գրիչ կամ մատիտ:
- Եթե երեխան չի խոսում, տվեք նրան պատասխանի տարբերակներով հարցեր, որպեսզի նա կարողանա ձեռքով կամ հայացքով ցույց տալ ճիշտ պատասխանը:
- Խրախուսեք երեխայի՝ այլընտրանքային ձևով հաղորդակցվելու փորձերը:

Հիպերակտիվություն

Ուշադրության պակասի և հիպերակտիվության համախտանիշը զարգացման նյարդաբանական, վարքային խանգարում է, որը դրսևորվում է այնպիսի ախտանիշներով, ինչպիսիք են՝ ուշադրության կենտրոնացման խնդիրները, գերակտիվությունը և իմպուլսի վերահսկման դժվարությունները:[11] Վերջին ժամանակներում սա համարվում է ամենից շատ հանդիպող խանգարումներից մեկը և ավելի շատ հանդիպում է տղաների մեջ, քան աղջիկների: Հիպերակտիվության համախտանիշները բաժանվում են 3 խմբի՝ *ուշադրություն, հիպերակտիվություն* և *իմպուլսիվություն*: Ստորև ներկայացվում են յուրաքանչյուր խմբի բնութագրիչները.[12]

Ուշադրության խնդիրների դեպքում երեխան

- դժվար է կենտրոնանում և հաճախակի սխալներ է կատարում
- դժվարանում է երկար նստել և կենտրոնացնել ուշադրությունը
- թվում է, թե չի լսում, երբ խոսում են իր հետ
- հաճախ չի կատարում հանձնարարությունը և չի ավարտում առաջադրանքը
- չի սիրում, խուսափում է մտավոր ջանքեր պահանջող առաջադրանքներից
- հեշտությամբ շեղվում է արտաքին ազդակներից
- մշտապես ընդհատում և խանգարում է մյուսներին
- հաճախակի կորցնում է իրերը
- հակված է երևակայելու, հնարելու

Հիպերակտիվության և իմպուլսիվության դեպքում երեխան

- նստած տեղում անընդհատ պտտվում է, շարժում է ձեռքերն ու ոտքերը
- անհանգիստ է, նստած տեղից հաճախակի վեր է կենում
- դժվարանում է հանգիստ խաղալ կամ ընկերների հետ զվարճանալ, օրինակ՝

10 https://cerebralpalsyresource.weebly.com/teaching-strategies.html

11 Cecil R. Reynolds, PhD Randy W. Kamphaus, PhD. Attention-Deficit/Hyperactivity Disorder (ADHD): DSM-5™ Diagnostic Criteria https://images.pearsonclinical.com/images/assets/basc-3/basc3resources/DSM5_DiagnosticCriteria_ADHD.pdf

12 http://adhd-institute.com/assessment-diagnosis/diagnosis/dsm-5/

դասընկերների հետ դասամիջոցներին խաղալ
- խոսում է չափից շատ
- չի կարողանում սպասել իր հերթին
- հաճախ մոռանում է, ցրված է իր ամենօրյա գործողություններում
- անհամբեր է, հաճախ պատասխանում է, երբ հարցը դեռ չի էլ ավարտվել:

Ուսման մեջ դժվարություններ ունեցող երեխաներ

Համաձայն հոգեբույժների ամերիկյան ասոցիացիայի կողմից հրատարակված ձեռնարկի՝ ԱՎՁ-V-ի(DSM-5), ուսման մեջ դժվարությունների հիմքում ընկած է հոգեկան գործընթացների խանգարումը, որն անմիջականորեն ազդում է ինչպես ուսման հիմնական հմտությունների վրա, ինչպիսիք են՝ կարդալը, գրելը, մաթեմատիկական գործողություններ կատարելը, այնպես էլ բարձրագույն հոգեկան գործառույթների վրա, ինչպիսիք են՝ վերացական մտածողությունը, հիշողությունը, ուշադրությունը, ինչն ազդում է ուսումնական գործընթացի վրա՝ այն երեխայի համար դարձնելով անմատչելի:[13]

Ինչպես նշում են բազմաթիվ հեղինակներ, ուսման մեջ դժվարությունը հնարավոր չէ ամբողջովին վերացնել. այն երեխային ուղեկցում է ամբողջ կյանքի ընթացքում, սակայն համապատասխան միջամտության դեպքում աշակերտը կարող է մեծ հաջողություններ ունենալ և առաջընթաց գրանցել:[14] Այս երեխաներն արտաքինից պայծառ և խելացի երեխաների տպավորություն են թողնում, սակայն չեն կարողանում ցուցաբերել նույն առաջադիմությունը, ինչ իրենց հասակակիցները, այդ պատճառով դա երբեմն համարվում է թաքնված հաշմանդամություն, որը կարծես անջրպետ է երեխայի ներուժի և նրա իրական առաջադիմության միջև:

Ուսման մեջ դժվարություններ են ունեցել մի շարք հայտնի մարդիկ, օրինակ՝ դետեկտիվ ժանրի ներկայացուցիչ Ագաթա Քրիստին, հայտնի ֆիզիկոս Ալբերտ Այնշտայնը, ամերիկացի դերասան, կինոռեժիսոր Հենրի Ուինքլերը, ամերիկացի գիտնական, գյուտարար Թոմաս Էդիսոնը և այլք:[15]

Կարևոր է նշել, որ այս խանգարումները պայմանավորված չեն սոցիալական անբարենպաստ պայմանների, այն է՝ ընտանիքի սոցիալական վիճակի, ծնողների ոչ սոցիալական վարքի, խնամքի բացակայության կամ գերխնամքի հետ:

Համաձայն Ուսումնական խանգարումների ամերիկյան ասոցիացիայի՝ «Ուսման մեջ դժվարություններ» տերմինի տակ թաքնված են մի շարք այլ խանգարումներ, ինչպիսիք են՝ դիսլեքսիան և դիսգրաֆիան, դիսկալկուլիան, լսողական վերլուծության խանգարումը և այլ խանգարումներ:[16]

13 https://www.understood.org/en/learning-attention-issues/getting-started/what-you-need-to-know/difference-between-learning-disabilities-and-learning-and-attention-issues

14 https://ldaamerica.org/types-of-learning-disabilities

15 https://healthresearchfunding.org/famous-people-dysgraphia/

16 https://ldaamerica.org/types-of-learning-disabilities

17 Սոցիալական դժվարությունները չեն մտնում այս խմբի մեջ որպես խանգարում, սակայն միշտ զուգակցվում են՝ որպես երկրորդային հետևանք: Որպես կանոն՝ ուսման մեջ դժվարություններ ունեցող երեխաների մեջ դրսևորվում է ցածր ինքնագնահատական, անվստահություն սեփական ուժերի նկատմամբ, ինչի արդյունքում այս երեխաներն ունենում են սոցիալական խնդիրներ:

Դիսկալկուլիա

Դիսկալկուլիան համարվում է զարգացման խանգարում, որը բնութագրվում է մաթեմատիկական գործողությունների կատարման, ժամանակի ընկալման, չափի, տարածական մտածողության* խանգարումներով:[18] Այս խանգարումը դրսևորվում է բնակչության 3-6%-ի շրջանում, ընդ որում ինչպես միջին, այնպես էլ բարձր մտավոր կարողություն ունեցող անձանց շրջանում:

Նման խանգարում ունեցող երեխաներն ունենում են հետևյալ խնդիրները.

- դժվարությամբ են ընկալում և տարբերակում թվերը. օրինակ՝ կարող են լսել **3**6**9**,**4**9 և գրել **264.69**
- չեն կարողանում մտապահել ամսաթվերը, տարեթվերը, նույնիսկ եթե դրանք շատ կարևոր են
- հաշվելիս անընդհատ կորցնում են հաշիվը, հատկապես, եթե շեղվում են
- դժվարություն են ունենում՝ կապված ժամանակի, ուղղությունների, դասավորվածության և հերթականության հետ:

18 * Տարածական մտածողությունը ներառում է ընդարձակ և ավելի սահմանափակ տարածությունների ճանաչման և նրանց օգտագործման ներուժը: https://ldaamerica.org/types-of-learning-disabilities/

Գործնական խորհուրդներ ուսուցիչներին

- Թույլ տվեք օգտվել հաշվիչից դասերի և ստուգողական աշխատանքների ժամանակ:
- Ստուգողական աշխատանքների ժամանակ մի փոքր ավելացրեք ժամանակը:
- Հնարավորության դեպքում թույլ տվեք ձայնագրել դասը:
- Մանրամասն բացատրեք այն բառերը, որոնք ենթադրում են գործողություններ (գումարում, հանում, բաժանում և այլն):
- Հանձնարարեք ստացված տեղեկությունը ներկայացնել պատկերների միջոցով. օրինակ՝ (7-5=2) գործողության համար աշակերտը կարող է նկարել 3 պատկեր, մեկում կան 7 բադիկներ, երկրորդում 5-ը թռչում են, և երրորդում մնացել են 2 բադիկ:
- Համոզվեք, որ երեխաները կարողանում են օգտվել բազմապատկման աղյուսակներից, և դրանք միշտ հասանելի են նրանց համար:
- Հիմնական մաթեմատիկական գործողությունները բացատրելիս օգտագործեք կոպեկներ, բլոկներ, փայտիկներ, քարտեր:
- Նոր դաս բացատրելիս ստուգող հարցեր տվեք, որպեսզի հասկանաք՝ արդյոք հասկացել է դասը, թե ոչ:
- Հնարավորության դեպքում ներառեք այնպիսի համակարգչային մաթեմատիկական խաղեր, որոնք անմիջապես տալիս են ճիշտ պատասխանը:

Դիսլեքսիա

Դիսլեքսիան նյարդաբանական խանգարում է, որը բնութագրվում է կարդալու կարողության դժվարությամբ, որն էլ խանգարում է երեխայի բառապաշարի հարստացմանն ու գիտելիքների ձեռքբերմանը:[19]

Դիսլեքսիա ունեցող երեխաները դժվարանում են.

սովորել տառերը և հնչյունները

- սովորել օտար լեզուներ
- հիշել պարզ հաջորդականությունները, օրինակ՝ հաշվարկ մինչև 20, կամ թվարկել շաբաթվա օրերը, արտասանել այբուբենը
- տարբերել գրությամբ նման տառերը
- տարբերել նույն տառով սկսվող կամ իրար նման բառերը. օրինակ՝ տուն-տղա, կամ տանիք-կարիք
- համադրել տառերը, վանկերը և կարդալ
- հասկանալ ընթերցածի իմաստը:

19 dyslexiaida.org/definition-of-dyslexia/

Գործնական խորհուրդներ ուսուցիչներին

Օգտագործեք ձայնագրիչ: *Դիսլեքսիայով երեխայի համար ընթերցելը բավականին խրթին է, քանի որ նրանք մեծ դժվարությամբ են համադրում տառերը: Ձայնագրեք դասը կամ առաջադրանքը և տվեք երեխային, որ լսի ականջակալներով, այդպես նա կարող է տեքստը լսել որքան անհրաժեշտ է՝ առանց խանգարելու մյուսներին:*

Կարևոր բառերը գրեք գրատախտակին: *Մինչ դուք կսկսեք նոր դասը, կարևոր բառերը գրեք գրատախտակին և խոսելու ընթացքում անդրադարձեք դրանց: Այսպես աշակերտը կսովորի գրվածքը կապել բառի հետ, որն էլ կհեշտացնի անցումն ընթերցանությանը:*

Ընդգծեք կարևոր տեղեկությունը: *Դասանյութում սովորաբար բազմաթիվ տեղեկություններ են լինում, որոնք կարող են շփոթեցնել աշակերտին: Ընդգծված նախադասությունները աշակերտին կօգնեն միանգամից կենտրոնանալ դրանց վրա՝ առանց այլ նախադասությունների վրա շեղվելու:*

Պլանավորեք, օրվա ռեժիմ ստեղծեք: Կարդալու դժվարություն ունեցող երեխայի համար օրվա ռեժիմը չափազանց կարևոր է: Կարգուկանոնը և գործողությունների հաջորդականության մատնանշումն օգնում են նրանց կենտրոնանալ և արդյունավետ սովորել:

Օգտագործեք օժանդակ տեխնոլոգիաներ:

Թույլ տվեք օգտվել բառարաններից:

Տրամադրեք աշխատանքի օրինակը, այսպես նրանք ավելի հեշտ կհասկանան, թե ինչ է իրենցից պահանջվում:[20]

Դիսգրաֆիա



Դիսգրաֆիան գրելու կարողությանը տիրապետելու կայուն դժվարությունն է, որի ժամանակ գրավորում դրսևորվում են կայուն բնույթի յուրատիպ սխալներ: Դիսգրաֆիա ունեցող երեխաների գրավոր աշխատանքներում հանդիպում են հետևյալ սխալները.

- հնչյունների, վանկերի բացթողումներ, փոխարինումներ, տեղափոխումներ

20 https://ldaamerica.org/types-of-learning-disabilities/

- բառերի աղավաղումներ
- բառերի միացյալ գրություն և առանձին բառերի մասնատում
- նախադասության անդամների համաձայնեցման խանգարումներ
- գրությամբ նման տառերի փոխարինումներ
- տառերի «հայելիային» գրություն:[21]

Լսողական վերլուծության խանգարում

Լսողական վերլուծության խանգարման դեպքում դժվարանում է լսողական ինֆորմացիայի վերլուծությունը: Այն կարող է առաջացնել լսողական հիշողության խնդիրներ և լսողության մեխանիկականացում: Այսինքն, երեխաները չեն կարողանում տարբերակել հնչյունների և բառերի միջև եղած տարբերությունները նույնիսկ այն դեպքում, երբ հնչյունները ասվում են բարձր և պարզ: Նրանք դժվարանում են որոշել ձայնի աղբյուրը, հետևաբար չեն կարողանում արգելափակել ֆոնային աղմուկը:

Այս խանգարումն ունեցող երեխաները

- խոսում են ավելի բարձր, քան պետք է
- դժվարանում են հիշել հերթականությունը
- հաճախ խնդրում են կրկնել բառերը կամ նախադասությունները
- դժվար են մտապահում լսած տեղեկատվությունը
- ամեն ինչ շատ բառացիորեն են մեկնաբանում
- դժվարությամբ են լսում աղմկոտ միջավայրում
- անընդհատ կարիք ունեն հարմարեցման և միջավայրի խելամիտ ձևափոխման
- աշխատելիս միշտ փորձում են հանգիստ տեղ գտնել և առանձնանալ
- նյութի բանավոր ներկայացումից հետո կարիք ունեն նաև գրավոր մատուցման
- յուրաքանչյուր քայլից առաջ խնդրում են ուղղորդել:



21 Ավագյան Ա., Գրիգորյան Ա., Թադևոսյան Է. և այլք,-Լոգոպեդիան գործնականում,- Ուսումնամեթոդական ձեռնարկ, 98 էջ, Երևան 2017

Բաժին 2

Գնահատումը ներառական կրթության համակարգում

Երեխայի կարողությունների և դժվարությունների գնահատումը նրան քայլ առ քայլ մոտեցնում է արդյունավետ կազմակերպված կրթությանը:

Հատուկ կրթության պրոֆեսոր Մ. Քասլբերի

Ներառական կրթության համակարգում առանձնահատուկ կարևոր են երեխայի մասին տեղեկատվության փոխանակումն ու ճշգրիտ գնահատումը, ուստի մանկավարժական կազմը պետք է կարողանա գնահատել և ամեն ինչ կազմակերպել՝ ելնելով երեխայի կարիքի վերաբերյալ տեղեկությունից: Մեր աշխատանքն է հասկանալ՝ ինչ է պետք երեխային, և ինչ կարողություններ ունի: Կրթական կարիքի ճշգրիտ գնահատումը ենթադրում է արդյունավետ միջամտություն, որն էլ նպաստում է կրթական նպատակների իրագործմանը: Պետք է հստակ տեսնել, թե որտեղ է երեխան և որոշել, թե որն է հաջորդ քայլը: Գնահատումը կարելի է և պետք է կատարել ամեն օր, ամեն շաբաթ, քանզի միայն այս ձևով կարող ենք ճանաչել երեխայի հնարավորությունները: Պետք է տեսնել, թե որտեղ է երեխան, պետք է կարողանալ «կարդալ» երեխային և անհրաժեշտության դեպքում փոփոխել դասավանդման եղանակները, սակայն մինչ աշակերտին գնահատելը պետք է գնահատել դասի պլանը, որն ունի 2 չափանիշ՝ *ուսումնական պլանի բարդության աստիճանը* և *միջավայրի կազմակերպումը:* Պետք է գնահատել, թե որքանով է առաջադրանքն արդյունավետ աշակերտի համար, որքանով է մատչելի և համապատասխան վերջինիս կարողություններին[22]:

Առաջադրանքի կազմման համար մանկավարժական թիմը պետք է կարողանա պատասխանել 3 հիմնական հարցի:

22 Salvia/Ysseldyke/Bolt Assessment in Special and Inclusive Education 11Th Edsition

ԻՆՉ ՍՈՎՈՐԵՑՆԵԼ

ԻՆՉՊԵՍ ՍՈՎՈՐԵՑՆԵԼ

ԻՆՉՊԻՍԻ ԻՐԱԿԱՆ

ԱԿՆԿԱԼԻՔՆԵՐ ՈՒՆԵՆԱԼ:

Գնահատումը տվյալների հավաքագրումն է, որի նպատակն աշակերտի վերաբերյալ որոշում կայացնելն է:[23] Երբ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխան չի հասցնում ծրագիրը և զգալիորեն ետ է մնում հասակակիցներից, մենք սկսում ենք մտածել, որ երեխան չի կարողանում սովորել և ավելի քիչ ենք ընդգրկում դասապրոցեսում: Իրականում կրթական խնդիրների մեծամասնությունը պայմանավորված է աշակերտի հանդեպ մեր ակնկալիքների և նրա ընդունակության անհամապատասխանությամբ: Ընդ որում ակնկալիքները կարող են երեխայի ընդունակություններից ինչպես բարձր լինել, այնպես էլ ցածր: Ցածր սովորաբար լինում են, երբ երեխայի տարբերությունը հասակակիցներից ակնհայտ է և արտաքինից տեսանելի: Պատկերը լիովին փոխվում է, երբ ստուգում ենք երեխայի իրական կարողությունները, գրանցում իրական խնդիրը և նոր միայն առաջադրանքը կառուցում՝ հիմնվելով երեխայի կարիքի մասին մեր գիտելիքի վրա: Սա առանցքային մոտեցում է, քանի որ, եթե ճիշտ մոտեցմանը զուգահեռ իրականացվի գնահատում, ապա ակնհայտ կդառնա, որ աշակերտի կողմից գրանցվել է տեղաշարժ, ինչը շատ կարևոր է ինչպես նրա, այնպես էլ ուսուցչի համար: Շատ հաճախ, երբ երեխան զարգացման որևէ առանձնահատկություն է ունենում, ուսուցիչներից շատերը պիտակավորում են որպես «խնդիրով երեխա» և հակվում են ընդհանրացնելու այդ «խնդիրը», ինչն էլ ավելի է բարդացնում աշխատանքը: Իրականում ամեն ինչ շատ ավելի հեշտ կլինի, եթե փորձենք վերհանել այն խնդիրները, որոնք խանգարում են երեխայի ուսումնառությանը և դասապրոցեսին ներգրավմանը, պարզենք այն հնարավորություններն ու կարողությունները, որոնք երեխան ունի, ապա վերլուծենք և գտնենք տարբերակներ դասապրոցեսը բոլորի համար արդյունավետ դարձնելու համար:

23 Նույն տեղում

Գնահատման տեսակները

«Երբ խոհարարը փորձում է ապուրը, դա ձևավորող գնահատում է, իսկ երբ հյուրերն են փորձում՝ ամփոփիչ»:[24]

Ռոբերտ Ստեյկ, Իլնիուս համալսարանի դասախոս

Դպրոցում կիրառվում է երկու տեսակի գնահատում ՝ ձևավորող (ֆորմատիվ) և ամփոփիչ (սումատիվ):

- Ամփոփիչ գնահատումը վերահսկում է ուսման որակը, որոշում է աշակերտների առաջադիմության մակարդակը՝ հանրակրթության պետական չափորոշչով նախատեսված ծրագրերի սահմանած նպատակների համաձայն: Այսպիսով, ամփոփիչ գնահատումը կատարվում է ծրագրի վերջում՝ հաստատելու համար, որ աշակերտները յուրացրել են ծրագրի նպատակները: Ամփոփիչ գնահատման ժամանակ դրվում է միավոր:
- Ձևավորող գնահատումը ստուգում է յուրաքանչյուր աշակերտի զարգացման դինամիկան և նպաստում ուսման որակի բարելավմանը: Այն սովորաբար կատարվում է տարվա սկզբում և ընթացքում՝ այսպիսով հնարավորություն ընձեռնելով տվյալ առարկայի դասավանդման որոշակի պահերին նյութի յուրացման վերաբերյալ անմիջապես պատկերացում կազմելու:[25]

Ձևավորող գնահատման օրինակ

- Դասի վերջում ուսուցիչը յուրաքանչյուրին հանձնարարում է ամփոփել ուսումնական նյութն այս 3 տարբերակով՝ ամփոփել դասը 10-15 բառով, 30-50 բառով, 75-100 բառերով:
- **3-2-1 հետհաշվարկ:** Աշակերտները գրավոր կամ բանավոր պատասխանում են հետևյալ հարցերին.
- փաստ, որ նախկինում չգիտեիք,
- 2 փաստ, որ ձեզ զարմացրեց,
- 1 գործողություն, որ պատրաստվում եք անել նոր գիտելիքներով:
- **Առաջադրանք «1 րոպե»:** Երեխաները դասի վերջում հակիրճ պատասխանում են դասի վերաբերյալ ամենազարմանալի, ամենաբարդ մասերի հարցերին:

Ամփոփիչ գնահատում

Ստուգողական աշխատանքները, ինքնուրույն աշխատաքները, տարեվերջյան քննությունները՝ այս բոլորը սումատիվ գնահատման տեսակներ են:

Ախտորոշիչ գնահատում

Գնահատումը հնարավորություն է տալիս փոփոխելու առաջադրանքները և միջամտությունը՝ միաժամանակ օգնելով երեխային հասնելու այն ցանկալի մակարդակին, ինչին ձգտում ենք: Ուսուցիչները, հենվելով կրթական չափորոշիչների

24 https://resourced.prometheanworld.com/types-of-summative-formative-assessment/

25 Նույն տեղում

վրա, պլանավորում են դասը: Իսկ ինչ անել այն աշակերտների հետ, ովքեր տարբերվում են իրենց ակադեմիական և վարքային առանձնահատկություններով: Այս աշակերտներին օգնություն է անհրաժեշտ, որպեսզի նրանք ևս կարողանան մասնակցել դասապրոցեսին, ինչի համար անհրաժեշտ է, որ մանկավարժական թիմը կարողանա գնահատել երեխաների կարողությունները: Ինչպես նշում է պրոֆեսոր Մ. Քասլբերին հարցազրույցի ժամանակ. «Պարտադիր չէ, որ ուսուցիչը բարդ գնահատման թեսթեր կիրառի, որպեսզի գնահատի աշակերտի կարողություններն ու դժվարությունները, բավական է նստել երեխայի մոտ և տարբեր հանձնարարություններ տալով՝ պարզել, թե ինչպես է վերլուծում տեղեկությունը, ինչպես է մտապահում և ինչպես ոչ: Ըստ պրոֆեսոր Մ. Քասլբերիի՝ գնահատումը մեկ քայլ առաջ է դեպի կրթություն, ինչի համար ուսուցիչը պետք է կարողանա «կարդալ» երեխային և պարզել, թե ինչ գիտի և ինչ չգիտի:

Գնահատումը կամուրջ է ուսուցման

և ուսումնառության միջև:

Սկրինինգ/առաջնային ախտորոշում: Շատ կարևոր է՝ որքան հնարավոր է վաղ հայտնաբերել երեխաների ֆիզիկական, ակադեմիական և վարքային խնդիրները: Խնդիրների վաղ հայտնաբերումը կանխարգելում է հետագա բարդությունները: Տեսողական խնդիրների վերհանման դեպքում, օրինակ՝ լինզաների և ակնոցների շնորհիվ, հնարավոր է արագ վերականգնել երեխայի առաջադիմությունը:

Թեսթավորումը: Թեսթավորումը գնահատման տեխնիկաներից մեկն է, որն օգտագործվում է տվյալների հավաքագրման համար. այն կազմված է որոշակի հարցերից և անցկացվում է անհատների կամ խմբի հետ՝ արդյունքները հաշվելու նպատակով: Արդյունքների հաշվումը թեսթավորման վերջնական արդյունքն է:

Գնահատման գործընթացի ընթացքում կիրառվում են դիտարկման տվյալները, անամնեզի հավաքումը, թեսթավորումը և մասնագիտական դատողությունները.[26]

Դիտարկում: Բնական միջավայրում աշակերտների դիտարկումն օգնում է վերհանել աշակերտի ուսումնական, վարքային և սոցիալական հարմարման խնդիրները: Տարբեր միջավայրերում կատարված դիտարկումները կարող են անգնահատելիորեն մեծ տեղեկություն տրամադրել երեխայի վերաբերյալ:

26 Salvia/Ysseldyke/Bolt Assessmen, 11Th Edsition

Նկար1: Մասնագետը դիտարկում է իրականացնում դասարանում:

Հարցազրույցներ: Հարցազրույցները կիրառվում են աշակերտների մտածողության և վարքի օրինաչափությունների վերաբերյալ ավելի ստույգ տեղեկություն ստանալու համար: Կիրառվում են մշակված, չմշակված, պաշտոնական և ոչ պաշտոնական հարցազրույցներ:

Մանկավարժական խորհրդակցություն: Ուսուցիչները կարող են օգտագործել դիտարկումներից և հարցազրույցներից ստացված տեղեկությունն ուսումնական նյութը պլանավորելու ժամանակ: Այս տեղեկությունն օգնում է որոշել, թե ինչպես կարելի է կազմակերպել ուսուցումը և, ելնելով դասի նպատակներից, ինչպիսի տեխնիկաներ կիրառել:

Առաջընթացի գնահատում: Գնահատելիս չափազանց կարևոր է գրավոր արձանագրել աշակերտի առաջընթացը: Այս արձանագրությունը ծառայում է որպես գործիք եւ թույլ տալիս վերլուծել տվյալները և որոշելՀառաջընթացն ակներեւ է, թե ոչ: Արդյունավետ կիրառման դեպքում առաջընթացի վերահսկումը հնարավորություն է ընձեռում աշակերտի առաջընթացի մասին գրավոր արձանագրությունը ներկայացնել ծնողներին, ղեկավարներին, այլ ուսուցիչների եւ ամենակարևորը՝ աշակերտին, որն էլ նպաստում է բավարարվածության զգացողությանը[27]:

Սովորաբար կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների մեջ շատ դանդաղ է նկատվում ուսումնական առաջընթացը, երբեմն այն գրեթե չի էլ նկատվում: Բնականաբար, ուսուցիչը չի ստանում այն արդյունքը ինչի համար ներդրել է իր ուժն ու ժամանակը, աստիճանաբար նվազում են սպասումները և պահանջներն աշակերտից, ինչը բերում է նրան, որ աշակերտը դուրս է մնում ուսումնական գործընթացից: Շատ հաճախ կարելի է լսել նման արտահայտություններ. «Չի հասկանում, չի կարող կարդալ, չի կարող գրել», այս արտահայտությունները գրեթե դատավճիռ են դառնում շատ երեխաների համար: Սակայն փորձառու ուսուցիչներն ավելի խորն են գնում և բացահայտում են, որ երեխան կարող է կարդալ, բայց շատ դանդաղ, կամ դժվարանում է գրել թվեր, փոխարենը կարողանում է գծել երկրաչափական պատկերներ: Վերոհիշյալ

27 Salvia/Ysseldyke/Bolt Assessmen, 11Th Edsition

ընթացակարգերի կիրառումը «Համագործակցային մոտեցումը ներառական կրթության մեջ» պիլոտային ծրագրի շրջանակներում, ապացուցեց այն փաստը, որ ճշգրիտ գնահատումը և դրա հաղորդակցումը մանկավարժական կազմի և ծնողների միջև, կարող է նշանակալի ազդեցություն ունենալ երեխայի իրական կարիքի գնահատման գործընթացում:

Հավելված 1-ում ներկայացված է առաջընթացի գնահատման ձևաչափի օրինակը, որը ստեղծվել և կիրառվել է «Համագործակցային մոտեցումը ներառական կրթության մեջ» պիլոտային ծրագրի շրջանակներում, ինչպես նաև կիրառվում է «Աուտիզմ ազգային հիմնադրամի» «Իմ ուղին» ուսումնավերականգնողական կենտրոնում:

Անհատական ուսուցման պլան (ԱՈՒՊ)

ԱՈՒՊ-ը «...հանրակրթության պետական և առարկայական չափորոշիչների, ծրագրերի և երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի հիման վրա կազմված փաստաթուղթ է, որը սահմանում է սովորողի կրթության կազմակերպման տարեկան նպատակը, խնդիրները և դրանց հասնելու գործողությունները(ներառյալ աջակցող ծառայությունները): Ընդ որում աջակցող ծառայությունները սովորողին տրամադրվում են դասերից հետո՝ ըստ որոշված ծավալի և տևողության, սակայն օրական 1,5 ժամից ոչ ավելի:[28]

ԱՈՒՊ-ը մշակվում է միայն այն երեխայի համար, ով ունի կրթության առանձնահատուկ պայմանների կարիք և առանց անհրաժեշտ ծրագրային պարզեցումների և հարմարեցումների չի կարող հասնել իր կրթության նպատակներին:[29]

Դեպքի վարում

Արդյունավետ ներառական կրթություն իրականացնելու գործում մեծ նշանակություն ունեն թիմային աշխատանքի կազմակերպումն ու մանկավարժական անձնակազմի սերտ համագործակցությունը: Երևանի թիվ 163 դպրոցում իրականացրած պիլոտային ծրագիրը ցույց տվեց, որ երեխայի վերաբերյալ տեղեկատվության փոխանցումը և մանկավարժական կազմի համագործակցությունն ակնհայտորեն բարձրացնում են կրթության որակը և նպաստում երեխաների առաջադիմության բարձրացմանը: Մանկավարժական անձնակազմի յուրաքանչյուր անդամ, փոխանցելով երեխայի մասին իր տեղեկությունները, դիտարկման արդյունքները, կարող է մեծ ներդրում ունենալ երեխայի առաջընթացի գործում: Հավելված 2-ում ներկայացված է թիմային աշխատանքի կազմակերպման համար մշակված ձևաչափի օրինակը, որն ադապտացվել է Երևանի թիվ 163 դպրոցում *«Համագործակցային մոտեցումը ներառական կրթության մեջ»* պիլոտային ծրագրի շրջանակներում: Այս գործիքի կիրառումը հնարավորություն է տալիս հավաքագրելու երեխայի մասին ողջ տեղեկությունը և կազմակերպելու ավելի անհատականացված և արդյունավետ միջամտություն:

Շատ կարևոր է, որ երեխայի հետ աշխատող բոլոր ուսուցիչները մասնակցեն այս հանդիպումներին և միասին քննարկելով՝ առանձնացնեն այն խնդիրները, որոնք խանգարում են երեխայի ուսումնառությանն ու սոցիալական հարմարմանը: Այս դեպքում աշխատանքային խմբի բոլոր անդամները տեղեկացված կլինեն, թե ինչպիսի միջոցներ են անհրաժեշտ կիրառել աշակերտի հետ աշխատանքում և ավելի շատ պատասխանատվություն և պատրաստակամություն կդրսևորեն դրանց իրականացման գործընթացում:

28 ՀՀ ՕՐԵՆՔԸ «ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=94683

29 Թադևոսյան Ս. Անհատական ուսուցման պլանի մշակման,- մեթոդական ուղեցույց-ձեռնարկ, Երևան, 2016

Նկար 2: Աշխատանքային հանդիպում մասնագետների հետ:

Դեպքի վարումը հնարավորություն է տալիս.

- կազմակերպել թիմային աշխատանք՝ առանձնացնելով ուսման գործընթացին առավելագույնս խոչընդոտող խնդիրները
- հստակ սահմանված ժամանակամիջոցում իրականացնել հստակ սահմանված միջամտություն
- աշխատանքը բաշխել երեխայի հետ աշխատող բոլոր մասնագետների միջև:

Վարքի գնահատումը դիտարկման միջոցով

Ուսուցիչների համար թերևս ամենամեծ դժվարություններից է՝ դասարանում աշխատել այն երեխաների հետ, ովքեր ունեն արտահայտված վարքային խնդիրներ և իրենց վարքով շեղում են դասապրոցեսի գրեթե ողջ ընթացքը: Նման հանգամանքներում առանցքային է դառնում վարքի պատճառը հասկանալը: Յուրաքանչյուր վարք նկարագրվում է իր գործառույթներով և առանձնահատկություններով: Վարքի գործառույթը գրեթե անհնար է ուղղակիորեն դիտարկել, այնինչ առանձնահատկությունները հնարավոր է ուղղակիորեն չափել:[30]

Վարքի գործառույթն այն պատճառն է, ինչի հետևանքով այն տեղի է ունենում, կամ այլ կերպ ասած՝ վարքի «նպատակն» է: Երբեմն երեխաներն իրենք են բացատրում վարքի գործառույթը, օրինակ. «Ես խոսում էի, որ նա ինձ չխանգարի»: Երբեմն այդ բացատրություններն ընդունելի են, եթե տեղին են որոշակի իրավիճակում, կամ կարող են չընդունվել, եթե դրանք չեն համապատասխանում իրավիճակին կամ անիմաստ են: Օրինակ՝Դավիթը դասի ժամին հանում է իրեն տրված սնունդը և սկսում է ուտել՝ պատճառաբանելով, որ սոված է: Ուսուցիչը մոտենում է նրան և հուշում, որ կարող է ուտել միայն դասամիջոցին: Դավիթը տեղավորում է սնունդը պայուսակում և շարունակում է

30 Salvia/Ysseldyke/Bolt Assessment 11TH Edition

դասը:

Յուրաքանչյուր վարքագիծ նպատակաուղղված է և իմաստավորված:
Պրոֆեսոր Մ.Քասլբերի

Ուսումնական գործընթացը կազմակերպելու համար երբեմն ուսուցիչների առջև խնդիր է առաջանում ուսումնասիրել երեխայի, այսպես կոչված, թիրախային վարքը: Հիմնականում դիտարկվում են վարքի 2 տեսակները. առաջինը **ցանկալի վարքն** է, որը մենք անընդհատ փորձում ենք ավելացնել, սրա մեջ են մտնում բոլոր կրթական գործողությունները՝ ընթերցանություն, գիտելիքների յուրացում, համագործակցություն, քաղաքավարի խոսք: Երկրորդն **անցանկալի վարքն** է, որտեղ ներառվում են վնասող, ստերեոտիպային, անպատեհ ու անկանոն վարքերը:

Վնասող վարք են համարվում վարքային այն դրսևորումները, որոնք վտանգավոր են իրենց կամ այլ երեխաների համար և միջամտության կարիք ունեն: Այս խմբի մեջ են մտնում նաև ինքնավնասման վարքի ձևերը, որոնք են գլխով խփելը, ինքն իրեն կծելը: Ագրեսիվ վարքը ևս, որպես կանոն, միջամտության կարիք ունի, այն կարող է արտահայտվել ինչպես ֆիզիկապես, այնպես էլ խոսքով և կարող է հանգեցնել երեխայի մեկուսացմանը:[31]

Ստերեոտիպային վարք է ձեռքերի թափահարումը, ճոճվելը, կրկնվող խոսքը, որոնք համարվում են սոցիալապես անընդունելի վարքաձևեր, գրավում են աշակերտների ուշադրությունը և կարիք ունեն համապատասխան միջամտության:

Իրավիճակին ոչ համապատասխան (տարօրինակ) է այն վարքը, որը որոշակի իրավիճակներում համարվում է տեղին, իսկ մեկ այլ իրավիճակում՝ ոչ տեղին, երբեմն՝ տարօրինակ: Օրինակ՝ երեխան դասի ժամին վազվզում է դասարանում. նման վարքը հիմնականում կապված է ազդակների վերահսկման դժվարությունների հետ. երեխաները շատ հաճախ չեն կարողանում իրենց վերահսկել, այստեղ միջամտությունը պետք է ուղղել ոչ թե վերացնելու վարքը, այլ փոխակերպելու սոցիալապես ընդունելի վարքով: Այսպես կոչված «խանգարող» վարքը ևս պատկանում է այս խմբին: Օրինակ՝ վազելը և գոռալը շատ ընդունելի են խաղահրապարակում, սակայն խանգարող են համարվում դասարանում:

Յուրաքանչյուր վարք ունի պատճառ, երեխան իր վարքով միշտ փորձում է փոխազդել շրջապատի հետ, հասկանալով վարքի պատճառը՝ հնարավոր է դառնում իրականացնել արդյունավետ միջամտություն:

31 Michael L. Bloomquist, Steven V. Schnell. 2002. "Helping Children with Aggression and Conduct Problems: Best Practices for Intervention" 16

Վարքի գնահատումն անհրաժեշտ է 2 պատճառով. ***առաջինը՝*** ճանաչելու և դասակարգելու դա: Բազմաթիվ խանգարումներ դրսևորվում են ատիպիկ վարքով, օրինակ՝ աուտիզմը կամ հուզակամային խանգարումները: Վարքային և սոցիալ-հուզական խանգարումները հայտնաբերելու համար ուսուցիչը պետք է կարողանա գնահատել վարքը: ***Երկրորդը՝*** վարքի գնահատումը կարևոր է անհրաժեշտ միջամտություն կազմակերպելու համար. ***այն խանգարումների դեպքում, որտեղ վարքային դրսևորումներն առանցքային են, վարքային միջամտությունը պարտադիր պայման է:*** Լայն կիրառում ունի վարքի գործառութային գնահատումը, որը կազմված է մի քանի գնահատման ընթացակարգերից և միտված է որոշելու վարքի գործառույթը և վեր հանելու այն նախապայմանները, որոնց արդյունքում ի հայտ է գալիս վարքը: Վարքի գործառութային գնահատմանը հաջորդում է վարքային միջամտության պլանը:[32]

Թեև գնահատման գործընթացում կարող են կիրառվել տարբեր տեխնիկաներ և գործիքներ, սակայն կան մի քանի ընթացակարգեր, որոնց կիրառումը պարտադիր է:

Հստակեցնել այն վարքը, որը պետք է գնահատվի: Երեխան կարող է բազմաթիվ վարքեր ունենալ, սակայն վարքի գործառութային գնահատման համար անհրաժեշտ է ընտրել, առանձնացնել ուսումնառությանն առավել խանգարող վարքը; Օրինակ՝ Անին չի լսում ուսուցչի հանձնարարությունները, անընդհատ ձայներ է հանում, ժամանակ առ ժամանակ կծում է իրեն. ուսուցիչը կարող է որոշել, գնահատել կծելու վարքը, քանի որ այն անմիջապես վնասում է երեխային, ինչպես նաև շատ կարևոր է, որ ընտրված վարքը լինի չափելի:

Վարքի գնահատման համար անհրաժեշտ է իրականացնել հետևյալ գործողությունները:

1. Առանձնացնել պայմանները, որոնք դրդում են անցանկալի վարքի դրսևորմանը:

- ***Դրդապատճառ.*** վարքից անմիջապես առաջ տեղի ունեցած յուրաքանչյուր իրադարձություն. սա կարող է լինել ուսուցչի հանձնարարական, ցածր գնահատական ստանալը և այլ:
- ***Նախորդող իրադարձություններ.*** ավելի ընդհանրական իրադարձություններն են, որոնք անմիջապես չեն ազդում վարքի վրա, բայց մեծացնում են դրսևորման հավանականությունը: Օրինակ՝ լավ չքնելը, հիվանդությունները, երկարատև բացակայությունները:[33]
- ***Հետևանք.*** այստեղ նկարագրվում է այն ամենը, ինչ տեղի է ունենում վարքից անմիջապես հետո: Օրինակ՝ եթե աշակերտը խփում է մեկ այլ աշակերտի, հետևանքը կարող է լինել տնօրենի մոտ գնալը և ծնող կանչելը:

2. Առաջարկել վարքի գործառույթի նախավարկած: Հավաքելով և ամփոփելով տվյալները՝ կարելի է արդեն կանխորոշել վարքի դրսևորման հնարավոր պատճառները.

- ուշադրություն գրավելու մղումը
- ցանկություն արտահայտելու անհրաժեշտությունը
- առաջադրանքներից խուսափումը
- ինքնախթանումը և այլն:

3. Ստուգել վարքի գործառույթի նախավարկածը: Փոփոխելով դրդապատճառը և հետևանքը՝ կարելի է ճշտել՝ արդյոք վարքի գործառույթը ճիշտ է, թե սխալ: Օրինակ՝ եթե տվյալներն ամփոփելուց հետո պարզ է դառնում, որ վարքի գործառույթը խուսափումն է առաջադրանքից, քանի որ այն բարդ է, ուսուցիչը

32 Robert LaRue, PhD, BCBA-D Associate Director of Behavioral and Research Services, Douglass Developmental Disabilities Center Rutgers University https://www.asatonline.org/research-treatment/clinical-corner/functional-analysis/

33 https://www.autismclassroomresources.com/setting-events-in-data-collection-step/

պետք է ավելի հեշտացնի առաջադրանքը, եթե այդուհետ վարքի բացասական դրսևորումները նվազում կամ վերանում են՝ նախավարկածը հաստատվում է:

4. ***Մշակել վարքի միջամտության պլան:*** Վարքի կարգավորմանը միտված միջամտության պլանում պետք է առաջարկվի փոխարինող վարք. օրինակ, եթե երեխան խուսափում է առաջադրանքից, որովհետև այն դժվար է, պետք է երեխային սովորեցնել, որ հանգստանալու ժամանակ կամ օգնություն խնդրի: Վարքի պլանը պետք է ներառի նաև պայմանների փոփոխություն, օրինակ՝ եթե վարքի գործառույթը խուսափումն է բարդ առաջադրանքներից, ուսուցիչը կարող է սկսել պարզ առաջադրանքներից և հետո աստիճանաբար բարդացնել: ***Շատ կարևոր է մշակել վերահսկման մեխանիզմ և ստուգել՝ արդյոք վարքի պլանն աշխատում է, թե ոչ:***

Կիրառական վարքային վերլուծություն

Կիրառական վարքային վերլուծությունը գիտականորեն հիմնավորված մեթոդ է, որն ուղղված է ուսումնառությանը խոչընդոտող վարքերի նվազեցմանը, սոցիալապես առավել ընդունելի հմտությունների և կարողությունների ձևավորմանն ու սոցիալական հարմարմանը[34]: Այս մեթոդի մասին տեղեկությունը թույլ է տալիս ուսուցիչներին առանձնացնել դիտարկվող վարքը և ազդելով դրդապատճառի և հետևանքների վրա՝ փոփոխել այն: Համաձայն այս տեսության՝ վարքի վրա ազդում են դրան հաջորդող հետևանքները:

Առաջադրանքի բովանդակությունը: Փոփոխելով առաջադրանքը, դարձնելով այն ավելի հետաքրքիր, դյուրին, տարիքին և հետաքրքրություններին համապատասխան՝ ուսուցիչները կարող են վերահսկել աշակերտների վարքը, ստեղծել բարենպաստ միջավայր և նվազեցնել անցանկալի վարքը:

Դասարանի կանոնները. օգնում են աշակերտներին հասկանալու՝ ինչ է կարելի և ինչ չի կարելի անել դասարանում: Որպեսզի երեխաները հիշեն այդ կանոնները, դրանք պետք է լինեն սահմանափակ, ոչ մեծաթիվ և հեշտ ըմբռնելի:

Դասասենյակում իրերի դասավորությունը: Աղմուկը և բարձր ձայները շատ հաճախ կարող են խթանել անցանկալի վարքի առաջացումը: Կահույքի դասավորությունը և որոշ աշակերտների տեղափոխումը կարող է նվազեցնել աղմուկը դասարանում:

Հասակակիցների հետ շփում: Դասարանն այն կարևոր սոցիալական միջավայրն է, որտեղ երեխաները ձեռք են բերում սոցիալական հմտություններ: Ուսուցիչը կարող է նպաստել հասակակիցների միջև շփմանը՝ կազմելով զույգեր լավ զարգացած սոցիալական հմտություններ ունենցող աշակերտների և թույլ սոցիալական հմտություններ ունեցող աշակերտներից, որն էապես կնպաստի իրավիճակին ոչ համապատասխան վարքի նվազմանն ու ցանկալի վարքի խթանմանը:

Ցանկալի վարքի խթանման համար ուսուցիչը պետք է վստահ լինի, որ՝ աշակերտը կարող է այդ վարքը դրսևորել. օրինակ՝ կարող է հաշվել փայտիկներով, կարող է 30 րոպե նստել դասասենյակում: Դրական վարքն անպայման պետք է խոսքով ամրապնդել և անմիջապես խրախուսել. օրինակ՝ ուսուցիչը կարող է ասել. «Շատ լավ հաշվեցիր, եթե խնդիրդ էլ վերջացնես, կարող ես 5 րոպե հանգստանալ»:

34 https://www.autismspeaks.org/what-autism/treatment/applied-behavior-analysis-aba

Խրախուսանքը ցանկալի վարքի դրսևորումներն ավելացնելու համար լավագույն միջոցն է: Գոյություն ունեն դրական և բացասական խրախուսանքներ. նրանց միջև տարբերությունն այն է, որ դրական խրախուսանքի դեպքում երեխային տրվում է ցանկալի իրը, կամ գործողություն կատարելու հնարավորությունը, իսկ բացասականի դեպքում՝ արգելվում: Դրական խրախուսանքի օրինակ կարող են լինել խրախուսական արտահայտությունները, խաղերը, ուսուցչի օգնական նշանակելը, տնային աշխատանքից մեկ օրով ազատելը:[35]

Խրախուսանքի օգտագործման հաջողությունը կախված է խրախուսանքի ճիշտ ընտրությունից, որի արդյունքում միշտ ավելանում է դրական վարքը: Հարկավոր է անընդհատ առաջարկել նոր խրախուսանքներ և աշակերտներին տալ հնարավորություն՝ ընտրություն կատարելու: Երբեմն ուսուցիչները խուսափում են այս մեթոդից՝ նշելով, որ պետք չէ գովել աշակերտին այն բանի համար, ինչը նա այսպես, թե այնպես պիտի անի, սակայն վարքային խնդիրներ ունեցող աշակերտների հետ խրախուսանքի կիրառումը չափազանց կարևոր է, քանի որ դա նպաստում է դրական վարքի ձևավորմանն ու ամրապնդմանը:

Հավելված 3-ում ներկայացված է դասարանում աշակերտի վարքի գնահատման թերթիկը, որը կարելի է կիրառել անցանկալի վարքի պատճառները հասկանալու համար: Օրինակ՝ եթե ուսուցիչը մի քանի օր գրանցի վարքից առաջ տեղի ունեցած իրադրությունը և տեսնի, որ այն միշտ տեղի է ունենում դասի վերջում, կարող է ենթադրել, որ երեխան հոգնում է, և թույլ տալ, որ աշակերտը հաջորդ անգամ 10 րոպե շուտ դուրս գա դասարանից: Եթե աշակերտի այս վարքը նվազի կամ աստիճանաբար վերանա, ուսուցիչը կարող է եզրակացնել, որ ճիշտ է գնահատել վարքի գործառույթը և համապատասխան միջամտություն է իրականացրել:



«Խրախուսանքների և պատժի գիտակցությունն ու սպասումը կարող են մեծ ազդեցություն ունենալ անձի վարքում»:

Պրոֆեսոր Ռոբերտ Աբոթ

35 STRATEGIES FOR PROMOTING POSITIVE BEHAVIORS: Reinforcement. 2013. The Center for Advanced Study of Teaching and Learning (CASTL) at the University of Virginia, Charlottesville. Doi:http://curry.virginia.edu/uploads/resourceLibrary/Reinforcement_VKRP.pdf

Վարքային խանգարումներ ունեցող աշակերտների հետ աշխատանքում բավականին արդյունավետորեն կիրառվում են ինքնավերահսկման տեխնիկաները՝ որպես ագրեսիայի փոխարինման միջոց: Համաձայն ագրեսիայի փոխարինման տեսության՝ աշակերտները սովորում են ճանաչել այն իրավիճակները, որոնք ամենից շատն են նրանց բարկությունն առաջացնում: Միևնույն ժամանակ նրանք սովորում են վերահսկել տվյալ իրավիճակի նկատմամբ իրենց հակազդումը: Հետագայում սովորում են հանդարտվել և գիտակցաբար հաղթահարել այդ իրավիճակները: Հետազոտությունը ցույց է տվել, որ ինքնավերահսկման տեխնիկաները կարող են չափազանց արդյունավետ լինել երեխաների ուսումնական և սոցիալական միջավայրերում ընդունելի վարքի ձևավորման գործում:[36] Որպես ինքնավերահսկման տեխնիկա՝ կարելի է երեխաներին սովորեցնել հաշվել բարկության ժամանակ, կամ խորը շնչել և երկար արտաշնչել:

36 Michael L. Bloomquist, Steven V. Schnell. 2002. "Helping Children with Aggression and Conduct Problems: Best Practices for Intervention" 207

Բաժին 3

Կրթական կարիքներին արձագանքում և միջամտություն

«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի համաձայն մինչև 2025 թվականը նախատեսվում է հանրակրթության համակարգում անցում կատարել համընդհանուր ներառական կրթության՝ կիրառելով **երեխայի կրթական կարիքներին արձագանքման եռաստիճան համակարգ:**[37]

Այս գլխում կներկայացվի ԱՄՆ-ի դպրոցներում կիրառվող կրթական կարիքների արձագանքելու **եռաստիճան համակարգ**ի մոդելը, ինչը կօգնի պատկերացում կազմելու համակարգի մասին՝ շեշտադրելով ուսուցչի գործառույթները:

Կրթական կարիքներին արձագանքման և միջամտության իրականացման համակարգը դպրոցի աջակցման եռաստիճան մոդել է, որն օգնում է դպրոցներում ուսման մեջ դժվարություններ և վարքի խանգարումներ ունեցող երեխաների վաղ հայտնաբերմանը և աջակցմանը:

Այս մոդելի արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ են հետևյալ 4 բաղադրիչները:[38]

Գիտականորեն հիմնավորված մեթոդների կիրառում, որը ենթադրում է որակյալ, գիտականորեն հիմնավորված մեթոդներով հիմնական կրթություն ստանալու հնարավորություններ դասարանում սովորող բոլոր աշակերտների համար:

1. *Աշակերտների շարունակական գնահատում:* Առաջնային գնահատումը և առաջընթացի գրանցումը հնարավորություն են տալիս՝ տեսնելու աշակերտների ուսումնական կարողությունները և առաջընթացը, ինչպես նաև դրանք համեմատելու հասակակիցների խմբի հետ: Այս տեղեկությունները հետագայում օգնում են բացահայտելու այն աշակերտներին, ովքեր ունեն ավելի մանրակրկիտ գնահատման կամ լրացուցիչ միջամտության կարիք:

37 ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ ԵՐԵԽԱՅԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ Հավելված N 1 ՀՀ կառավարության 2016 թ. սեպտեմբերի 29-ի նիստի N 38 արձանագրային որոշման http://mlsa.am/wp-content/uploads/2016/11/38-32.1ardz.voroshum.doc

38 http://www.rtinetwork.org/learn/what/whatisrti

2. *Աստիճանական ուսուցում:* Բազմակողմանի և տարբերակված մոտեցումը հնարավորություն է տալիս աստիճանաբար խտացնելու ուսումնական ծրագրերը՝ միաժամանակ համապատասխանեցնելով աշակերտների կարիքներին: Շատ հաճախ տարրական դասարաններում ավելացվում է մաթեմատիկային և ընթերցանությանը հատկացվող ժամաքանակը:
3. *Համագործակցություն ծնողների հետ:* Դպրոցները ծնողներին անընդհատ տեղեկություն են տրամադրում երեխաների առաջընթացի, ուսումնական ծրագրերի և միջամտությունների, երեխայի հետ աշխատող մասնագետների, ինչպես նաև տարեկան նպատակների մասին:

Երեխայի կրթական կարիքներին արձագանքման եռաստիճան համակարգը ներառում է հետևյալ աստիճանները.

I աստիճան: Որակյալ դասավանդում և առաջնային գնահատում

Այս աստիճանում ընդգրկված են դասարանում սովորող բոլոր աշակերտները: Կարևոր է, որ բոլոր աշակերտներն ունենան կրթություն ստանալու համապատասխան հնարավորություն, և ոչ մի երեխա դուրս չմնա ուշադրությունից, ինչպես նաև կարևոր է, որ ուսուցումը լինի որակյալ և ներառի գիտականորեն հիմնավորված մեթոդներ: Այս փուլում ուսուցիչը պարտադիր կիրառում է կրթական չափորոշիչներին համապատասխան՝ հեշտ անցկացվող, առաջնային գնահատում:

Առաջնային գնահատումը հնարավորություն է տալիս պարզելու, թե արդյոք դասարանում բոլոր աշակերտներն են յուրացրել կարդալու և մաթեմատիկական հմտությունները, սա նաև թույլ է տալիս բացահայտելու այն երեխաներին, ովքեր գտնվում են ռիսկային գոտում և կարիք ունեն հավելյալ միջամտության:[39] Մաթեմատիկայի և ընթերցանության հետ կապված խնդիրներ ունեցող աշակերտների համար իրականացվում է նաև առաջընթացի գնահատում և շարունակական ուսուցում: Այն աշակերտները, ովքեր այս փուլում չեն հաղթահարում իրենց առջև ծառացած խնդիրներն ու դժվարությունները, անցնում են II աստիճան:

Առաջընթացի գնահատումն ընդհանուր ուսումնական պլանի շրջանակներում ամրագրում է այն տվյալները, որոնք վերաբերում են թիրախային հմտություններին:[40] Նպատակն է՝ արձանագրել աշակերտների առաջընթացը, գնահատել դասավանդման արդյունավետությունը և անհրաժեշտության դեպքում փոփոխություններ կատարել: Առաջընթացի գնահատումը կատարվում է ամիսը մեկ, կամ անհրաժեշտության դեպքում՝ շաբաթը մեկ անգամ:[41]

II աստիճան: Թիրախավորված միջամտություն

Այս աստիճանը տրամադրվում է այն աշակերտներին, ովքեր չեն գրանցում համապատասխան առաջընթաց I աստիճանում: Այս աստիճանում միջամտությունն իրականացվում է փոքր խմբերով, հավելյալ հանձնարարությունների միջոցով փորձում են օգնել աշակերտին ինքնուրույն հաղթահարելու ուսումնական ծրագիրը: Այնուամենայնիվ, այս օգնությունն իրականացվում է ընդհանուր ծրագրի շրջանակներում, սա դեռ հատուկ կրթություն չի համարվում: Ուսուցիչները շարունակում են գնահատել աշակերտների առաջընթացն այս փուլում, որը տևում է 10 շաբաթ, և եթե աշակերտը համապատասխան առաջընթաց չի դրսևորում, նա անցնում է III աստիճան:

39 Evelyn Johnson, Ed.D. Student Assessment - Universal Screening
http://www.rtinetwork.org/component/content/article/26/429-assessment-universal-screening-q4

40 https://www.progressmonitoring.org

41 Sharon Vaughn Candace S.Bos Strategies for Teaching Students with Learning and Behavioral Problems

III աստիճան: Ինտենսիվ միջամտություն և գնահատում

Այս փուլում աշակերտները ստանում են անհատականացված, երկարատև, ինտենսիվ միջամտություն՝ ուղղված ցանկալի հմտությունների զարգացմանը: Եթե աշակերտն այս փուլում էլ չի գրանցում առաջընթաց, ապա ուղղորդվում է հոգեբանամանկավարժական գնահատման:

Երեխայի կրթական կարիքներին արձագանքման եռաստիճան համակարգը կարող է տարբերվել իր աստիճաններով, փուլերով և միջամտության տեսակներով, ինչպիսիք են խնդիրների լուծման, գործառութային գնահատման, ստանդարտ արձանագրության եւ համակցված մոտեցումները, այնուհանդերձ, այն ենթադրում է դպրոցական ռեսուրսների արդյունավետ կազմակերպում՝ ուղղված աշակերտների առաջադիմության ապահովմանը:[42]

Ուսուցչի դերը երեխայի կրթական կարիքներին արձագանքման եռաստիճան համակարգում

- ***Բացահայտել այն երեխաներին, ովքեր ունեն հավելյալ միջամտության կարիք:*** Դա արվում է առաջնային գնահատմամբ և այն երեխաների հետ, ովքեր գտնվում են ռիսկային գոտում, տարվում է համապատասխան աշխատանք II և III աստիճանում:
- ***Իրականացնել որակյալ դասավանդում, որը զգալիորեն կբարելավի աշակերտների ուսումնառության գործընթացը:*** Հիմնականում II աստիճանում երեխայի հետ աշխատանքն իրականացնում են ուսուցիչները, ինչպես անհատական, այնպես էլ խմբային պարապմունքների միջոցով: Երբեմն առարկայական ուսուցիչները գործում են միմյանց հետ համաձայնեցված, և մինչ մեկն աշխատում է մեծ խմբի հետ, մյուսը դասավանդում է փոքր խմբին:
- ***Գնահատել դասավանդման արդյունավետությունը՝ համոզվելու համար, որ այն նպաստում է աշակերտների ուսումնառությանը:*** Եթե աշակերտը II աստիճանում չի կարողանում առաջընթաց գրանցել, ապա ուսուցիչը խորհրդակցում է հատուկ մանկավարժի կամ հոգեբանի հետ:
- ***Հաճախակի հանդիպումներ կազմակերպել ծնողների, ուսուցիչների, հատուկ մանկավարժների և հոգեբանների հետ*** ՝աշակերտների հետ արդյունավետ աշխատանքներ իրականացնելու և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին բացահայտելու նպատակով:

Կրթական կարիքներին արձագանքման եռաստիճան համակարգում առավել կարևոր է ուսուցչի դերը, քանի որ կենտրոնում կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի վաղ բացահայտումն է:

42 http://www.rtinetwork.org/learn/what/whatisrti

Հատուկ մանկավարժը ևս կարևոր դեր ունի երեխայի կրթական կարիքներին արձագանքման եռաստիճան համակարգում, այն է՝

- համագործակցել առարկայական ուսուցիչների հետ, տրամադրել խորհրդատվություն
- օգնել՝ բացահայտելու զարգացման առանձնահատկություններ ունեցող աշակերտներին
- իրականացնել ինտենսիվ աշխատանք III աստիճանում գտնվող աշակերտների հետ
- աջակցել III աստիճանում գտնվող աշակերտներին՝ հաղթահարելու հիմնական ուսումնական ծրագիրը:

Համագործակցություն

Այս համակարգում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտներին բազմակողմանի օգնություն տրամադրելու նպատակով մեծ նշանակություն է տրվում ուսուցիչների համագործակցությանը, քանզի անձնակազմի համագործակցությունը համարվում է որակյալ կրթություն իրականացնելու ամենակարևոր պայմաններից մեկը: Հատուկ մանկավարժը համագործակցում է ուսուցիչների հետ՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտների համար ուսումնական ծրագրերը համարեցնելու և ադապտացնելու նպատակով, որպեսզի այս երեխաները ևս հնարավորություն ունենան իրենց կարողությունների սահմանում մասնակցել ընդհանուր ուսումնական ծրագրերին: Այս մոդելի շրջանակներում ուսուցիչները և մանկավարժական թիմը համագործակցում են որպես թիմի անդամներ, ովքեր վերլուծում են աշակերտների առաջընթացը, որոշում հետագա միջամտության ռազմավարությունը:[43]

Նկար 3: Մասնագետները քննարկում են երեխայի վարքը և մոտակա նպատակներ սահմանում:

43 http://www.rtinetwork.org/learn/what/whatisrti

Գործնական խորհուրդներ ուսուցիչներին

- Տարրական դասարաններում հաճախակի ստուգեք բոլոր երեխաների մայրենիի և մաթեմատիկայի գիտելիքներն ու կարողությունները, օրինակ՝ այբուբենի իմացությունը, բառերի ընթերցումը, բառապաշարը, արտասանությունը, բառերի ընկալումը, թվերի ճանաչումը, հաշվելու կարողությունը և այլն:
- Ուսման մեջ միանման խնդիրներ ունեցող երեխաներից կազմեք փոքր խմբեր:
- Հենվելով աշակերտի առաջադիմության վրա՝ կարևորեք այն հմտությունները, որոնք մեծ նշանակություն են ունենում ուսումնառության գործընթացում:
- Նախքան հանձնարարություն տալը, ցույց տվեք աշխատանքի օրինակները, հարմարեցրեք դասավանդումը՝ ելնելով երեխայի կարիքից, օրինակ՝ հաշվի առնելով, թե որքան արագ կամ դանդաղ է սովորում:
- Ուսումնական նյութը ներկայացրեք համակարգված հերթականությամբ՝ պարզ գործողություններից անցում կատարելով դեպի ավելի բարդը:
- Ստուգեք ընթերցանության մակարդակը. Ճիշտ կարդացած բառերի քանակը բաժանեք տեքստի բառերի քանակին:
- **Ինքնուրույն ընթերցանություն**: (95%-100%)20 բառից միայն մեկն է սխալ ընթերցվում:
- **Ուսուցողական մակարդակ:** (90%-94%)եթե աշակերտը 10 բառից 1-ը սխալ է ընթերցում, ապա ուսուցիչը պետք է հավելյալ աշխատանք կազմակերպի տվյալ աշակերտի հետ:
- **Անկումնային մակարդակ:** (90%-ից ցածր) եթե աշակերտը 10 բառից 1-ից ավելի սխալ է կարդում:
- Ետ մնացող աշակերտներին հաճախակի հանձնարարեք կարդալ:
- Գրելու միջոցով ամրապնդեք արտասանությունն ու ընթերցանությունը:
- Հաճախակի անցկացրեք առաջընթացի գնահատում:

Բաժին 4

Դասի կազմակերպման առանձնահատկությունները ներառական կրթության համատեքստում

Ցավոք, մեր իրականության մեջ գնալով ավելանում է այն երեխաների թիվը, ովքեր դպրոցում դժվարություններ են ունենում այլ երեխաների հետ շփման մեջ: Երեխաները գնալով ավելի քիչ են շփվում և համագործակցում միմյանց հետ: Այս բաժնում մեջբերվում են մի քանի մոտեցումներ Շերոն Վոն, Քենդոս և Բոսի «Վարքային խանգարումներ և ուսման մեջ դժվարություններ ունեցող աշակերտների ուսուցում» գրքից, որոնք կօգնեն ուսուցիչներին՝ միջավայրը կազմակերպելու և արդյունավետ ուսուցում իրականացնելու համար:

Նկար 4: Աշակերտներն ընդգրկված են խմբային աշխատանքներում:

Ուսումնական գործընթացն իրականանում է որոշակի միջավայրում, և որքան հաճելի և արդյունավետ է վերոհիշյալ միջավայրը, այնքան դրական ազդեցություն է

ունենում ուսուցման գործընթացի իրականացման վրա: Ուսումնական գործընթացն ինտերակտիվ ձևով կազմակերպել ապահովում է երեխաների մասնակցությունը դասին, կանխում է ձանձրույթը: Ընդհանուր առմամբ ակտիվ, շարժվող ու «խոսող» միջավայրում վատ իմաստով աչքի չեն ընկնում շարժուն, շատախոս ու ակտիվ երեխաները: Նրանց շարժվելն ու խոսելը չի խանգարում ընկերներին, քանի որ փորձ չի արվում դասն անցկացնել քար լռության ու անշարժության մեջ: Այս տիպի դասերում չափազանց կարևորվում է դասարանում ուսուցչի օգնականի ներկայությունն ու ակտիվ մասնակցությունը: Նա այս դեպքում ստանձնում է ոչ թե այս կամ այն երեխայի կողքին նստողի ու հետևողի դերը (ինչպես դա հաճախ արվում է), այլ դասապրոցեսի ակտիվ մասնակցի, ուղղորդողի, թիմի անդամի դերը:

«***Աշխատանք առաջադրանքային խմբավորումներով:*** Աշխատանքի այս ձևը ուսումնական և վարքային աշխատանք իրականացնելու համար է: Սովորաբար կիրառվում են խմբավորումների 6 տարբերակներ. դրանք են՝ աշխատանք մեծ խմբով, փոքր խմբով, անհատական, ինքնուրույն ուսուցում, համագործակցային ուսուցում, ընկերոջ հետ ուսուցում, համադասարանային ուսուցում: ԱՄՆ-ում ուսուցիչների մեծամասնությունը նախընտրում է այս բոլոր տեսակները կիրառել դասարանում:[44]

Նկար 5: Աշակերտները ներկայացնում են խմբային աշխատանքի արդյունքը:

«Աշխատանք մեծ խմբով» առաջադրանքի ժամանակ ուսուցիչը հանձնարարություն է տալիս կամ աշխատում է 6 և ավելի երեխաների հետ: Այս խմբավորումը հարմար է, երբ առաջադրանքի նպատակը նույնն է բոլոր երեխաների համար, դա կարելի է կիրառել ինչպես դիդակտիկ պարագաներով հագեցած, այնպես էլ ինտերակտիվ ուսուցման ժամանակ: Նման խմբավորման ժամանակ երեխաներն ավելի շատ ինքնուրույն են աշխատում և ավելի քիչ են ուղղորդվում ուսուցչի կողմից: Ստորև ներկայացված են գործունեության տեսակներ, որոնք առավել արդյունավետ են այս խմբավորման ժամանակ:

- Երեխաներին տալ ընդհանրական հարց և հանձնարարել քննարկել պատասխանները խմբի անդամների հետ: Սա հնարավորություն կտա բոլոր մասնակիցներին՝ մտածելու թեմայի շուրջ և մեկնաբանելու այն:
- Խմբին տալ մեծ թուղթ, մատիտներ, մարկերներ և որոշակի թեմայի շուրջ հանձնարարել գրել տարբեր բառեր, բառակապակցություններ և նախադասություններ:
- Առանձին աշակերտների հանձնարարել, որ իրենց բառերով ներկայացնեն այն տեսակետը, որին հանգել են խմբի անդամների հետ:
- Երեխաներին տրամադրել թերթիկներ, որտեղ նրանք կկարողանան լրացնել՝ նշելով, թե ինչ սովորեցին դասից, սովորածից ինչն իրենց ավելի շատ դուր եկավ, և ինչ կցանկանային սովորել հաջորդ անգամ: Այս առաջադրանքը շատ է դուր գալիս աշակերտներին, ինչպես նաև նպաստում է, որ երեխաները հաճույքով հաճախեն դասերին:

44 Sharon Vaughn, Candace S. Bos Strategies for Teaching Students with Learning and Behavior Problems

Նկար 6: Փոքր խմբային աշխատանք:

«Աշխատանք փոքր խմբով» առաջադրանքի ժամանակ խումբը կազմվում է 2-6 երեխաներից: Այս խմբավորումը հարմար է կիրառել տարբեր ունակություններ ունեցող աշակերտներից կազմված խմբերի հետ, ինչպես նաև այն դեպքերում, երբ ուսուցիչը ցանկանում է առաջադրանքի հետ մեկտեղ ուղղորդել երեխաներին:

Ստորև ներկայացված են գործունեության մի քանի տեսակներ, որոնք առավել արդյունավետ են նշված խմբավորման ժամանակ.

- **ընթերցանության ժամեր՝** ուսումնական ծրագրից ետ մնացող աշակերտներից կազմված փոքր խմբերի հետ, որոնք կարելի է կազմակերպել շաբաթական մի քանի անգամ
- **ինտենսիվ պարապմունքներ.** կազմակերպվում են երեխաների համար առավել դժվար առաջադրանքների շուրջ
- **գրավոր առաջադրանքներ՝** ուղղված նախկինում սովորած նյութի վերհիշ-մանը:

Անհատական առաջադրանքը հնարավորություն է տալիս ուսուցչին՝ արդյունավետ սովորեցնելու, վերահսկելու աշակերտի առաջընթացը, ինչ-պես նաև ուսումնական գործընթացը փոփոխելու և հարմարեցնելու բոլոր սովորողների կարիքներին: Ուսուցման այս ձևն առավել հարմար է ուսումնական և վարքային դժվարություններ ունեցող աշակերտների համար: Այն հնարավորություն է տալիս նրանց՝ ավելի շատ հարցեր ուղղելու և օգնություն ստանալու ուսուցչի կողմից: Այս մոտեցման դժվարությունն այն է, որ մինչ ուսուցիչն աշխատում է աշակերտներից մեկի հետ, մյուսները ևս պետք է ներգրավված լինեն ուսումնական գործընթացի մեջ: Հենց այստեղ էլ օգնության

են գալիս ինքնուրույն ուսուցումը, համագործակցային ուսուցումը, ընկերոջ հետ ուսուցումը, համադասարանային ուսուցումը: Այս գործընթացում մեծ դեր կարող է ունենալ նաև ուսուցչի օգնականը:

Ինքնուրույն ուսուցումն աշակերտին հնարավորություն է տալիս կիրառելու ստացած գիտելիքները և ամրապնդելու դրանք: Այս մոտեցման կարևորագույն սկզբունքն այն է, որ աշակերտն արդեն յուրացրած լինի նախկինում հանձնարարված առաջադրանքի բովանդակությունը, իսկ հաջողության գրավականն այն է, որ աշակերտը կարողանա կատարել առաջադրանքը նվազագույն օգնությամբ:

Համագործակցային ուսուցման հիմքում ընկած է թիմային աշխատանքը, երբ աշակերտները ռեսուրս են հանդիսանում մեկը մյուսի համար: Ուսուցման այս ձևը ապահովում է համագործակցություն, ինքնուրույնություն և խմբային գործունեություն: Ուսուցիչը կարող է զարգացնել սովորողների միջև համագործակցություն՝ ստեղծելով այնպիսի ուսումնական միջավայր, որտեղ բոլոր աշակերտները կընդունեն խմբի ընդհանուր նպատակը և կգիտակցեն, որ խմբի յուրաքանչյուր անդամի հաջողությունն իրենց առավելությունն է: Բոլորը պետք է ստանան առաջադրանքը կատարելու համար անհրաժեշտ նյութեր, պետք է ունենան իրենց դերը, որն էլ իր հերթին կնպաստի աշխատանքի բաժանմանը. օրինակ՝ աշակերտներից մեկը կարող է խմբի առաջնորդ լինել, մյուսը կարող է գրանցել մտքերը, իսկ երրորդն էլ կարող է հանդես գալ որպես խմբի խոսնակ:

Խմբային աշխատանքների ժամանակ երեխաները կարող են միասին գրել, իրար փոխանցել գրավոր աշխատանքները, փոխանակել կարծիքներ: Խմբային աշխատանքները շատ արդյունավետ են տարրական դասարաններում: *Գիտնականները գտնում են, որ սա լավագույն միջոցներից է՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ուսումնական գործընթացն արդյունավետ կազմակերպելու համար:* Նման հնարավորությունը շատ կարևոր է այս երեխաների համար, քանզի նպատակ ունենալով սովորեցնելու նախօրոք պլանավորած ուսումնական նյութը՝ խմբային աշխատանքն օգնում է ձեռք բերելու դրական փորձ՝ համադասարանցիների հետ շփվելու և մյուսներին օգնելու համար: Երեխաներին խմբավորելիս շատ կարևոր է հստակ բացատրել, թե ինչ է իրենցից պահանջվում, և որոնք են խմբային աշխատանքի հիմնական պահանջները: Ուսուցիչը ևս կարող է մասնակցել այս աշխատանքներին և ուղղորդել, որ խմբի անդամներն օգնեն մեկը մյուսին, սա առանցքային միջամտություն է, քանի որ երբ աշակերտները սովորում են աշխատել խմբով, նրանք կարող են թիմային առաջընթաց ցուցաբերել՝ նույնիսկ առանց ուսուցչի օգնության:

Ուսուցում ընկերոջ հետ տեխնիկան կիրառվում է, երբ աշակերտներից մեկը, ով արդեն սովորել է և տիրապետում է ուսումնական նյութին, սովորեցնում է մեկ այլ աշակերտի: Ուսուցման այս ձևն ուղեկցվում է ուսուցչի վերահսկմամբ, ով նախօրոք պլանավորում է առաջադրանքը և ներկայացնում զույգին: Սովորեցնողի դերում հանդես եկող աշակերտն օգնում է ընկերոջը և հետադարձ կապ ապահովում:



Նկար 7: Կիրառվում է ուսուցում ընկերոջ հետ տեխնիկան:

Հետաքրքիր է, որ վատ կարդացողներն առաջընթաց են ունենում՝ ինչպես սովորողի, այնպես էլ սովորեցնողի դերում հանդես գալով: Այդ իսկ պատճառով կարևոր է հաճախակի փոխել դերերը, որպեսզի աշակերտները հնարավորություն ունենան փորձելու երկու դերերի առավելությունները:[45] Այս դեպքերում ուսման մեջ դժվարություններ ունեցող երեխաները կարողանում են հանդես գալ սովորեցնողի դերում. օրինակ՝ սկզբում կարդում են թերթիկի վրա գրված բառը, հետո ցույց տալիս ընկերոջը և վերջում նորից հարցնում բառերը: Ընկերոջ հետ ուսուցման մեկ այլ կարևոր տեսակ է, երբ ավելի բարձր դասարանի աշակերտը սովորեցնում է ցածր դասարանի աշակերտին, քանի որ ենթադրվում է, որ մեծահասակն ավելի շատ գիտելիքներ ունի, և այս դեպքում սովորողն ավելի քիչ է կաշկանդվում: Մյուս տարբերակն այն է, երբ ուսման մեջ դժվարություններ կամ վարքային խանգարումներ ունեցող երեխաներն իրենք են սովորեցնում իրենցից ցածր դասարաններում սովորող, ուսման մեջ դժվարություններ կամ վարքային խանգարումներ ունեցող երեխաներին”:

Ուսուցման այս տեսակը ներդրվել է նաև «Իմ ուղին» ուսումնավերականգնողական կենտրոնում, որտեղ աուտիզմ ունեցող սաները աշխատում են ընկերների հետ, և սա, ինչ խոսք, մեծ հնարավորություններ է տալիս՝ ընդգրկվելու ուսումնական գործունեության մեջ: Կենտրոնում կատարված դիտարկումները ցույց են տվել, որ նույնիսկ ցածր մտավոր կարողություններ ունեցող սաները մեծ հետաքրքրությամբ ներգրավվում են գործընթացի մեջ և գրանցում առաջընթաց:

Վերևում թվարկված գրեթե բոլոր տեխնիկաները փորձարկվել են վերը ներկայացված պիլոտային ծրագրի շրջանակներում և զգալի ազդեցություն ունեցել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ուսումնական գործընթացի վրա: Երեխաներից մեկն, օրինակ, ուներ կարդալու դժվարություն և դասարանում հասցրել էր վատ կարդացողի և թույլ սովորողի համբավ ձեռք բերել: Փոքր խմբային առաջադրանքի ժամանակ խմբին հանձնարարվել էր հերթով կարդալ տեքստը և ընտրել մեկին, ով կներկայացնի այն դասարանի առաջ: Իհարկե, իմ թեթև հուշումով այս երեխան ընտրվեց որպես խմբի ներկայացուցիչ և արեց անհնարինն ու զարմացրեց բոլորին: Ծրագրի վերջում, երբ այն ամփոփվում էր երեխաների հետ, «Ի՞նչ սովորեցիք այս ընթացքում» հարցին երեխան պատասխանեց. «Ես սովորեցի կարդալ…»

45 Sharon Vaughn, Candace S. Bos Strategies for Teaching Students with Learning and Behavior Problems

Դասարանային աջակցություն կամ դասընկերների միջոցով ուղղորդման նպատակն է զարգացնել երեխաների կարդալու ունակությունը: Տարբեր կարողություններ ունեցող երեխաներն աշխատում են զույգերով(ավելի լավ կարդացող երեխան ավելի թույլ կարդացողի հետ և հակառակը):[46] Նրանք տարբեր գրքերով և դասագրքերով աշխատում են բանավոր ընթերցանության և պատմողական վարժությունների վրա: Այստեղ կարևոր պայմանն այն է, որ ավելի վատ կարդացողը կարողանա հեշտությամբ կարդալ հանձնարարված նյութը: Զույգերը կարող են կազմվել նույն դասարանում, կամ զուգահեռ դասարաններում և նույնիսկ բարձր և ցածր դասարաններում սովորող աշակերտներից: Ուսուցիչը նախօրոք կազմում է առաջադրանքները և վերահսկում ուսուցման գործընթացը: Հետազոտությունները ցույց են տալիս, որ նույնիսկ հաշմանդամություն ունեցող երեխաները, ինչպես տարրական, այնպես էլ միջին դասարաններում, մեծ հաջողություններ են գրանցում, եթե այս ուսուցումը կրում է շարունակական բնույթ. օրինակ՝ 16 շաբաթ անընդհատ, շաբաթական 3 անգամ, 30 րոպեանոց պարապմունքներով: Զույգերով ուսուցումը բարելավում է աշակերտների առաջընթացը ինչպես ընթերցանության, այնպես էլ մաթեմատիկայի և այլ առարկաների մեջ”:

Վարքի կառավարում և սոցիալական ներառում

Խորհուրդներ ուսուցիչներին դասարանում ցանկալի վարքի ձևավորման համար

- Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին համագործակցային ուսուցման մեջ ներառելիս շատ կարևոր է հաշվի առնել նրանց առանձնահատկությունները և ճիշտ ընտրել խմբերը:
- Հաշվի առնելով երեխաների ուժեղ կողմերը՝ հնարավորություն տալ նրանց այնպիսի առաջադրանք իրականացնելու, որը կնպաստի կարողությունների զարգացմանը՝ միաժամանակ հնարավորություն տալով ավելին սովորելու: Օրինակ, եթե երեխայի մեջ լավ զարգացած է նկարելու, ձևավորելու կարողությունը, կարելի է հանձնարարել, որ նա զբաղվի աշխատանքն ամփոփող պլակատի ձևավորմամբ:
- Ստեղծել այնպիսի միջավայր, որտեղ երեխաները կկարողանան ազատ շարժվել և հարմարավետ աշխատել խմբերով:
- Շատ կարևոր է երեխաներին սովորեցնել համագործակցել և աշխատել խմբով. այստեղ կարող է օգնության հասնել հստակ կանոններ սահմանելը:
- Գնահատել ինչպես երեխաների անհատական ձեռքբերումները, այնպես էլ՝ խմբի աշխատանքը:
- ***Կազմակերպել խմբային աշխատանքն այնպես, որ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխան կարողանա անկաշկանդ ինքնադրսևորվել և այլ լույսի ներքո երևալ դասընկերների առջև:***

Դասի կազմակերպում

Արդյունավետ ուսուցում կազմակերպելու համար շատ կարևոր է դասարանում բարենպաստ մթնոլորտի և աշակերտների կողմից սոցիալապես ընդունելի վարքի ձևավորումը: Սովորաբար ուսուցիչների մեծամասնությունը նախօրոք միջոցներ է ձեռնարկում՝ կանխելու դասարանում անցանկալի վարքի դրսևորումը:[47]

46 ClassWide Peer Tutoring. 2007. U.S. DEPARTMENT OF EDUCATION. WWC Intervention Report https://ies.ed.gov/ncee/wwc/Docs/InterventionReports/WWC_CWPT_070907.pdf

47 Thomas R. Kratochwill, Rachel DeRoos, Samantha Blair, University of Wisconsin-Madison. Classroom Management. Teachers

Շատ կարևոր է հենց տարվա սկզբում աշակերտներին բացատրել դասարանային կանոնները և ընդունելի վարքաձևերը, կարելի է նաև դրանք քննարկել աշակերտների հետ: Արդյունքում աշակերտներն ավելի շատ պատասխանատվություն կվերցնեն իրենց վրա և ավելի շատ հակված կլինեն հետևելու դրանց: Որքան հստակ բացատրի ուսուցիչը, այնքան շուտ կտեսնի դրա արդյունքը:[48] Ուսուցիչը պետք է հստակ սահմանի, թե

- երբ կարելի է զրուցել դասընկերների հետ և երբ ոչ
- երբ կարելի է քայլել դասարանում և երբ ոչ
- ինչ վարք պետք է դրսևորել տարբեր առաջադրանքների ժամանակ
- ինչ պետք է անել այլ աշակերտների հետ խնդիրներ ունենալու դեպքում:
- Շատ ուսուցիչներ նշում են, որ դասի կազմակերպումն ամենասթրեսային գործընթացն է, որը նույնիսկ կարող է դառնալ աշխատանքը լքելու պատճառ[49]: Ահա մի քանի մոտեցումներ, որոնք կօգնեն դասարանում աշակերտների դրական և ընդունելի վարք ձևավորելու համար:
- ***Հաճախակի օգտագործեք խրախուսանքներ՝ դրական վարքը խթանելու համար:*** Դրանք կարող են լինել խոսքով, ֆիզիկական հպումով կամ նյութական պարգևատրումով. խրախուսանքի ոսկե օրենքն է՝ դա պետք է լինի յուրատիպ և տրվի անմիջապես:[50]
- ***Կիրառեք քայլ առ քայլ խրախուսելու համակարգը:*** Այս համակարգի նպատակն է՝ ավելացնել դրական վարքը և նվազեցնել բացասականը: Աշակերտն ամեն անգամ խրախուսական նշան է ստանում, երբ ցանկալի վարք է ցուցաբերում կամ որոշակի ժամանակամիջոցում չի ցուցաբերում բացասական վարք (օրինակ՝ մեկ դասաժամի ընթացքում ոչ մի անգամ չի խփում դասընկերներին):[51] Դրական յուրաքանչյուր վարքագծի համար երեխան ստանում է մեկ խրախուսական միջոց, որը կարող է_ լինել ցանկացած գրավիչ իր, օրինակ՝ պիտակներ, աստղիկներ, տիպեր: Այս խրախուսական միջոցները հավաքելու օգնությամբ աշակերտները կարող են վաստակել հավելյալ հանգստի հնարավորություն, մինչև անգամ տնային աշխատանքից ազատվելու արտոնություն:

Հավաքելով նախօրոք պայմանավորված թվով խրախուսական նշանները՝ աշակերտը փոխանակում է դրանք ցանկալի գործողության կամ առարկայի հետ (օրինակ՝ հանգստի ժամանակ է վաստակում, կամ իր ցանկալի իրն է ստանում):[52] Այս համակարգը չափազանց արդյունավետ է աուտիզմ և վարքային խանգարումներ ունեցող երեխաների հետ աշխատանքում:

Modules.http://www.apa.org/education/k12/classroom-mgmt.aspx

48 https://www.thoughtco.com/classroom-procedures-and-routines-2081571

49 The Influence of Emotional Intelligence of Secondary School Teachers on Classroom Discipline Strategies. Journal of American Science, 2011;7(7) page 882-883.

50 http://www.pbis.org/school/pbis-in-the-classroom/classroom-pbis-practices

51 Ayllon, Teodoro. How to Use Token Economy and Point Systems. 2nd ed. Austin, Texas: Pro-Ed, 1999

52 http://www.minddisorders.com/Py-Z/Token-economy-system.html#ixzz5KYuZY9Dq

Նկար 8: Խրախուսական համակարգի նմուշ-օրինակ, որը կիրառվում է «Իմ ուղին» ուսումնա-վերականգնողական կենտրոնում:

- ***Ցանկալի վարք:*** Շատ կարևոր է, որ աշակերտը հստակ իմանա, թե ինչի համար է նա ստանալու այդ նշանները, ինչպես նաև պիտի իմանա, թե քանի նշան է պետք հավաքել՝ ցանկալի իրը կամ գործողությունը ստանալու համար:[53]

Խորհուրդներ ուսուցիչներին դասարանում ցանկալի վարքի ձևավորման համար

- Բարձրաձայնել աշակերտի դրական վարքը, օրինակ՝ ասել, որ աշակերտը ճիշտ է աշխատում:
- Առանձնահատուկ վերաբերմունք ցուցաբերել այն երեխաներին, ովքեր իրենց լավ են պահում:
- Տեղեկացնել այլ ուսուցիչներին, ծնողներին աշակերտի դրական վարքի մասին:
- Մշակել տարբեր խրախուսական անվանակարգեր. օրինակ՝ «օրվա լավագույն աշակերտ», «ամսվա ամենապարտաճանաչ աշակերտ»:
- Աշակերտներին ներգրավել անվանակարգերում ընտրություն կատարելու գործընթացում:
- Հաճախակի կիրառել տարբեր խրախուսանքներ, օրինակ՝ առաջադրանքն ավարտելուց հետո՝
  - հանգիստ տալ
  - ազատել տնային աշխատանքներից
  - թույլ տալ զբաղվել իր նախընտրած գործողությամբ, օրինակ՝ նկարելով, ներկելով
  - թույլ տալ հանձնարարությունը կատարել նախընտրելի դասընկերոջ հետ:

53 https://study.com/academy/lesson/token-economy-in-the-classroom-definition-examples-quiz.html

Սոցիալական դժվարություններ

Շատ հաճախ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներն ունենում են սոցիալական նորմերի, շփման և հաղորդակցման խնդիրներ, որոնց շարքում կարող են լինել ագրեսիան, հիպերակտիվությունը, կպչուն սևեռուն մտքերը, ամոթխածությունը: Դպրոցում իրականացված դիտարկումների ընթացքում նկատելի էր, որ այս երեխաները դասամիջոցներին գրեթե միշտ մենակ են լինում, նրանք դժվարությամբ են շփվում դասընկերների հետ, երբեմն, չիմանալով ինչպես դիմել կամ մտնել ընդհանուր խաղի մեջ, նրանց պահվածքը կարող է անպատեհ կամ ագրեսիվ բնույթ կրել: Երեխաները դասերի ժամանակ ևս առանձնապես աչքի չեն ընկնում իրենց ակտիվությամբ և հաճախ ուշադրություն չեն ստանում ուսուցչի կողմից: Զարմանալի չէ, որ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտները հիմնականում ունենում են ցածր ինքնագնահատական, նրանք ևս զգում են, որ ի տարբերություն այլ երեխաների, իրենք չեն կարողանում գրանցել այն առաջընթացը, ինչ իրենց հասակակիցները: Այստեղ շատ կարևոր է, որ ուսուցիչները և ծնողները բացահայտեն երեխայի ուժեղ կողմերը և հնարավորություն ստեղծեն դրսևորելու դրանք. սա միջոց է՝ փոխելու թե՛ երեխայի, թե՛ դասընկերների պատկերացումը աշակերտի կարողությունների վերաբերյալ: Այնուամենայնիվ, առավել բարդ է, երբ դասարանում կան երեխաներ, ովքեր ունեն ագրեսիվ վարք: Նման աշակերտները մեծ խնդիրներ են ունենում դասընկերների հետ, և շատ կարևոր է համապատասխան աշխատանք կազմակերպել նրանց հետ, քանի որ ագրեսիվ վարքն ինքն իրենով երբեք չի վերանում:[54] Նման իրավիճակներում և առհասարակ, երբ դասարանում սովորում են աշակերտներ, ովքեր իրենց վարքով կամ կարողություններով տարբերվում են համադասարանցիներից, շատ կարևոր է, որ ուսուցիչը նախօրոք զրուցի աշակերտների հետ, տեղեկացնի երեխայի առանձնահատկությունների մասին և հնարավորության սահմաններում հուշի երեխաներին, թե ինչպես կարելի է շփվել և մտերմություն հաստատել նրանց հետ: Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող բազմաթիվ երեխաների համար դպրոցի հիմնական գործառույթը սոցիալականացումն է, երբեմն հնարավոր է, որ դպրոցում երեխան ակադեմիական մեծ առաջընթաց այդպես էլ չգրանցի, սակայն դա կարող է անգնահատելի ազդեցություն ունենալ երեխայի կյանքի որակի վրա: Ուստի, կարևոր է, որ ուսուցիչը կարողանա երեխային սովորեցնել նաև սոցիալական հմտություններ. այն է՝ դիմել մյուս երեխաներին, օգնություն խնդրել, հարցեր տալ կամ պատասխանել հարցերին, միանալ խմբային խաղերին: Դեռահասության շրջանում հաշմանդամություն կամ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտների մեջ ավելի է սրվում այն զգացողությունը, որ իրենք տարբերվում են դասընկերներից և այդ սոցիալական խմբի մասը չեն կազմում: Այս տարիքում կարևոր է ավելի շատ ուշադրություն հատկացնել նման աշակերտին՝ հաճախակի մոտենալ, ընդգրկել փոքր խմբերի մեջ, խրախուսել մտերմությունն այլ աշակերտների հետ: [55]

54 Keenan K. Development of Physical Aggression from Early Childhood to Adulthood. In: Tremblay RE, Boivin M, Peters RDeV, eds. Tremblay RE, topic ed. Encyclopedia on Early Childhood Development. Published January 2012. http://www.child-encyclopedia.com/aggression/according-experts/development-physical-aggression-early-childhood-adulthood.

55 Practicing Social Skills.By National Center for Technology Innovation and Center for Implementing Technology in Education (CITEd). doi:http://www.ldonline.org/article/21025/

Նկար 9: Աշակերտներն ընդգրկված են մեծ խմբային աշխատանքում:

Հետազոտությունը ցույց է տալիս, որ այն դասարանում, որտեղ ուսման մեջ դժվարություններ ունեցող երեխաներն ընդունված են ուսուցիչների կողմից, ընդունված են նաև իրենց դասընկերների շրջանում: Հետազոտությունները ցույց են տալիս նաև, որ ներառական միջավայրում սովորող աշակերտներն ավելի սոցիալականացված են, քան այն երեխաները, ովքեր ուսուցում են ստանում հատուկ հարմարեցված միջավայրում, այդ թվում՝ նաև ռեսուրսային դասասենյակում:[56]

56 Sharon Vaughn, Candace S. Bos Strategies for Teaching Students with Learning and Behavior Problems

Սոցիալական հմտությունների ուսուցման տեխնիկաներ

Երեխաներին սոցիալական հմտություններ սովորեցնելու համար գոյություն ունեն տարբեր մոտեցումներ, որոնցից են նաև սոցիալական պատմությունները. դրանք լայնորեն կիրառվում են աուտիզմ և վարքային խանգարումներ ունեցող երեխաների, ինչպես նաև սոցիալականացման դժվարություններ ունեցող երեխաների հետ: Այս փոքրիկ պատմություններում քայլ առ քայլ նկարագրվում են տարբեր իրավիճակներ և օգնում՝ նախնական պատկերացում կազմելու համապատասխան միջավայրում ընդունված վարքերի և սոցիալական նորմերի մասին:

Այս մոտեցման հիմնական նպատակն է՝

- նվազեցնել բացասական վարքը
- նվազեցնել տագնապը
- օգնել՝ հարմարվելու նոր և անսպասելի իրավիճակներին
- հաղթահարել դժվարությունները:

Դա կարելի է կազմել նկարներով կամ օգտագործել համակարգիչը: Ստորև կներկայացվի սոցիալական պատմության օրինակ, որը մեր կողմից ներդրվել և կիրառվել է աուտիզմ ունեցող երեխաների հետ աշխատանքում:

dalma
Առևտրի
կենտրոնում

Ես գնում եմ առևտրի կենտրոն

Այնտեղ տեսնելու շատ բաներ կան

Ես արդեն շորեր եմ ընտրում

Ակնոցներ
փորձում

Ահա և հանդերձարանը

Ես հանգիստ սպասում եմ
իմ հերթին



Հիմա վճարելու ժամանակն է

Վերցնում եմ գնումներս
ու գնում հանգստանալու

Այժմ հանգստի ժամն է

Տուն գնալու ժամանակն է

Ահա և մայրիկս, հիմա ցույց կտամ նրան գնումներս



Ինձ այստեղ շատ դուր եկավ, ես այնպայման նորից կգամ

Հմտությունների հաջորդական ուսուցանումը

Սա մանկավարժահոգեբանական և վարքային մոտեցում է, որը կարելի է կիրառել աշակերտներին գործնական հմտություններ ուսուցանելու համար: Այս մոդելը կարելի է կիրառել ինչպես բարձր, այնպես էլ ցածր դասարաններում:

Առաջին քայլը ***մոդելավորումն*** է, որն իր մեջ ներառում է ցանկալի հմտության վարքային և խոսքային նկարագրությունն ու քայլերը:[57]

Քայլ 1: Ուսուցիչը ներկայացնում է կատարվելիք գործողության քայլերն առանձին-առանձին (օրինակՀՀմտնում է սրճարան, նստում է, խնդրում է մատուցողին, որ մոտենա և այլն):

Քայլ 2: Երեխաները դերային խաղի միջոցով ներկայացնում են հմտությունը՝ հիմնվելով իրական կյանքի փորձի վրա: Ուսուցիչը վերահսկում է գործընթացը:

Քայլ 3: Ուսուցիչն անդրադառնում է երեխաների խաղին, հատուկ ուշադրություն է հատկացնում այն դրվագներին, որոնք տեղին ու լավ են ներկայացվում, իսկ այն դերերը, որոնք լավ չեն ներկայացվել, ուսուցիչն ինքն է նորից ներկայացնում:

Քայլ 4: Աշակերտները հնարավորություն են ստանում փորձարկելու քայլերն իրական կյանքում՝ դասասենյակից դուրս:



Ուսուցողական տեխնիկաներ

Խնդիրների տուփ[58]

Նպատակը: Օգնել աշակերտներին՝ պարզելու այլ երեխաների հետ ունեցած խնդիրները և աջակցել դրանց լուծման հարցում:

Անհրաժեշտ նյութեր: Տուփ, որի վրա գրված կլինի՝ ***խնդիրների տուփ:***

Ընթացքը: Ուսուցիչը տուփը ցույց է տալիս աշակերտներին և ասում, որ ամեն անգամ, երբ որևէ մեկը խնդիր ունենա դասընկերների, ուսուցիչների հետ և տանը, կարող է գրել դրա մասին և գցել տուփի մեջ: Պետք է նշել, որ կարելի է գրել նաև անանուն: Յուրաքանչյուր օրվա վերջում ուսուցիչը 5 րոպե հատկացնում է խնդիրները կարդալուն, որից հետո ամբողջ դասարանով սկսում են լուծումներ առաջարկել: Կարևոր

57 Strategies for promoting social skill learning.Inovatiev tailored Learning.Powered by Hunter tafe. doi: https://itafe.huntertafe.edu.au/pluginfile.php/4516/mod_resource/content/1/CHCEDS003%20E2%20Handout%205%20Strategies%20for%20promoting%20social%20skill%20learning.pdf

58 Աղբյուրը՝ Sharon Vaughn, Candace S. Bos Strategies for Teaching Students with Learning and Behavior Problems

է աշակերտների ուշադրությունը կենտրոնացնել *խնդրի հստակեցման, լուծումների առաջարկության, դրանց հետևանքների կանխատեսման, ինչպես նաև վերջում խնդրի լուծման վերջնական տարբերակի ընտրման վրա:*

Խմբային դերային խաղ[59]

Նպատակը: Օգնել աշակերտներին՝ վերահսկելու սեփական հույզերը և խուսափելու այլ երեխաների հետ ընդհարումներից:

Ընթացքը: Առաջարկեք աշակերտներին ձևացնել, թե իբր իրենք գոյություն չունեցող կենդանիների ընտանիք են, կամ խոհարարներ են և միասին տորթ են պատրաստում: Դերային խաղի միջոցով առաջարկեք, որ հերթով արձաններ դառնան, իսկ մյուսները կարող են տեղափոխել նրանց:

Հետազոտությունը պարզել է, որ այս խաղը երեխաներին օգնում է ավելի լավ վերահսկելու սեփական հույզերը:[60]

Գնդակի փոխանցում

Այս խաղն առաջարկվել է Սյուզան Վիլյամս Վայթի կողմից և ուղղված է խմբային հաղորդակցման հմտությունների զարգացմանը: [61]

Անհրաժեշտ նյութեր: Գնդակ:

Ընթացքը: Աշակերտները կանգնում են շրջանաձև, երեխաներից մեկը սկսում է խաղը՝ խոսելով կողքինի հետ և փոխանցում գնդակը, հաջորդը շարունակում է երկխոսությունը և փոխանցում խմբի մեկ այլ անդամի: Այս խաղում պարտադիր պայման է, որ խաղացողները հետևեն մեկը մյուսին և գնդակի փոխանցման ժամանակ նայեն միմյանց աչքերի: Ուսուցիչներին խորհուրդ է տրվում մասնակցել այս խաղին և ընդգրկել այն երեխաներին, ովքեր ակտիվ չեն:

59 Աղբյուրը՝ https://www.parentingscience.com/social-skills-activities.html

60 Նույն տեղում

61 https://www.parentingscience.com/social-skills-activities.html

Գլուխ 5

Ուսման մեջ դժվարություններ ունեցող աշակերտների ընթերցանության գնահատում և ուսուցում

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների մեծ մասը դժվարություններ է ունենում՝ կապված ընթերցանության հետ, այս գլխում կներկայացվեն գնահատման և ուսուցման տեխնիկաներ, որոնց կիրառումը հնարավորություն կտա պարզելու աշակերտի առավել թույլ կողմերը և համապատասխան օգնություն տրամադրելով՝ բարելավել ուսուցման որակը:

Ուսուցիչների համար առավել հեշտ է գնահատել երեխայի սահուն ընթերցանությունը՝ ի տարբերություն այլ որակական հատկանիշների, քանի որ շատ կարճ ժամանակում կարելի է հասկանալ՝ արդյոք աշակերտն առաջադիմել է կարդալու հմտության մեջ և համապատասխանում է ընդհանուր դասարանի մակարդակին, թե ոչ: Սահուն(վարժ) ընթերցանությունը կազմված է 3 բաղադրիչներից՝ ճիշտ ընթերցանություն, արագություն և վանկատում: Սովորաբար գնահատվում է ճիշտ ընթերցանությունն ու արագությունը: [62]

Սահուն ընթերցանություն ասելով՝ մենք հասկանում ենք առաջարկված նյութի ամբողջական բառերով, առանց ընդհատելու, հնարավորինս արագ կարդալը, ընդ որում կարդալու արագությունը պետք է համապատասխանի սովորական խոսակցության տեմպին՝ նպաստելով ընթերցված նյութի բովանդակության, գաղափարի ըմբռնմանն ու ենթատեքստի կռահմանը(ինչպես կարդացողի, այնպես էլ ունկնդրի կողմից): Ընթերցանության սահունությունը գնահատվում է մեկ րոպեում ճիշտ կարդացած բառերի քանակով (WCPM), ինչպես նաև համաչափությամբ, տեմպով և արտահայտչականությամբ:

Ուսուցիչն ընտրում է աշակերտին անծանոթ տեքստ, որը նա ի վիճակի է կարդալու ինքնուրույն կամ թեթևակի օգնությամբ, տեքստի մեկ տարբերակը տալիս աշակերտին և մյուսը պահում իրեն՝ սխալները նշելու համար, կարելի է նաև ձայնագրել՝ առաջընթացն արձանագրելու համար: Ուսուցիչը հրահանգում է աշակերտին, որ կարդա, եթե աշակերտը չի կարողանում կարդալ բառը, ապա ուսուցիչը 3 վայրկյան սպասելուց հետո հուշում է բառը, ամեն սխալ կարդացած բառի տակ գիծ է քաշում. դա վերաբերում է սխալ արտասանությանը, բառի փոխարինմանը, բացթողմանը, 3 վայրկյանից ուշ բառի

62 Sharon Vaughn, Candace S. Bos Strategies for Teaching Students with Learning and Behavior Problems

ընթերցմանը, միևնույն ժամանակ սխալ չի համարվում բառի ավելացումը, կրկնումը, ինքն իրեն ուղղումը: Բացի դրանից ուսուցիչն ուշադրություն է դարձնում արտասանության, արագության, կրկնողությունների վրա: Եթե այս գնահատումը հաճախակի չի իրականացվում, օրինակ՝ 10 շաբաթը մեկ, ապա գնահատման ճշգրտության համար 2 տեքստ է հանձնարարվում:

Արդյունքները հաշվվում են հետևյալ կերպ.

1 րոպեում ճիշտ կարդացած բառերից հանում են սխալ բառերի քանակը: Օրինակ՝ եթե աշակերտը 1 րոպեում կարդում է 83 ճիշտ բառ և 6 սխաառ բառ, ապա արդյունքը կլինի 77, (83-6), իսկ եթե երկրորդ տեքստում կարդում է 84 ճիշտ և 11 սխալ բառ, ապա երկրորդ տեքստի արդյունքը կլինի 73 (84-11): Ճշգրիտ արդյունքը որոշելու համար որոշում են 2 տեքստերի արդյունքների միջինը: Այս դեպքում 77-ի և 73-ի միջինը 75-ն է:[63]

Ստորև ներկայացված է 1-ից 8-րդ դասարանին համապատասխան չափորոշիչների աղյուսակը: [64]

Դասարան	Աշուն	Ձմեռ	Գարուն
1	-	23-47	53-82
2	51-79	72-100	89-117
3	71-99	92-100	107-137
4	94-119	112-139	123-152
5	110-139	127-156	139-168
6	127-153	140-167	150-177
7	128-156	136-165	150-177
8	133-161	146-173	150-177

Բարձրաձայն ընթերցանություն և ընթերցանության նախապատրաստում



63 Fluency.First Grade Teacher Reading Academy.University of Texas.Doi: https://buildingrti.utexas.org/sites/default/files/documents/1TRA_Fluency.pdf

64 Աղբյուրը՝ Salvia/Ysseldyke/Bolt, Assessment in Special and Inclusive Education,

Ուղղորդված բարձրաձայն ընթերցանությունը մեծապես նպաստում է աշակերտների սահուն և վարժ կարդալու ունակության զարգացմանը, ինչպես նաև նպաստում է բառապաշարի հարստացմանը: Ուղղորդված ընթերցանությունն իր մեջ ներառում է բարձրաձայն ընթերցանությունը, սահուն ընթերցանության մոդելավորումը: Ուսուցիչը, բարձրաձայն կարդալով, հետաքրքրություն է առաջացնում աշակերտների շրջանում, ինչից հետո շատ հաճախ հաջորդում է քննարկումը տեքստի վերաբերյալ և ամփոփումը, մյուս կողմից՝ գրքին ծանոթ լինելն օգնում է աշակերտներին ավելի հեշտությամբ կարդալ:[65]

Բազմակի ընթերցում

Երեխաները սիրում են նույն պատմվածքը լսել մի քանի անգամ. սկզբում նրանք բառերն են ասում, հետո հաջորդում են նախադասությունները և վերջում արդեն կրկնում են ողջ ստեղծագործությունը: Փաստորեն, պատմվածքի բովանդակությանը ծանոթ լինելը հեշտացնում է ընթերցանությունը:[66]

Բազմակի ընթերցանությունը փոքր տեքստի ընթերցումն է առնվազն 3-ից 5 անգամ, մինչև աշակերտը կարողանա սահուն ընթերցել տեքստը:

Ընկերոջ աջակցությամբ ընթերցանություն

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտներն ավելի քիչ հնարավորություն ունեն կարդալու, քան իրենց հասակակիցները: Ընկերոջ աջակցությամբ ընթերցանության տեխնիկայի միջոցով աշակերտները կարող են աշխատել զույգերով և բարելավել ընթերցանության որակը:

Ինչպես է կիրառվում այս տեխնիկան: Ուսուցիչը թղթի վրա գրում է աշակերտների անունները՝ սկսելով ամենալավ կարդացող աշակերտից և վերջացնելով ամենավատ կարդացող աշակերտով, այնուհետև մեջտեղից կտրում է թուղթը և կազմում զույգեր՝ սկսելով առաջին թղթի առաջին և երկրորդ թղթի առաջին անուններից: Կարևոր է հատկապես ուշադրություն դարձնել կրթության առանձնա հատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտների զույգերի վրա, դրանք պետք է շատ ճիշտ ընտրված լինեն: Սկզբում կարդում է լավ կարդացող աշակերտը, այնուհետև շարունակում է ավելի վատ կարդացողը. կարևոր է խրախուսել աշակերտներին, որ միմյանց հարցեր տան տեքստի վերաբերյալ: [67]

Լուռ ընթերցանություն [68]

Այս տեխնիկան ենթադրում է աշակերտի կողմից ընտրված գրքով օրական 20-ից 30 րոպե ընթերցանություն դասարանում: Թեև այս տեխնիկան բավականին տարածված է կրթության համակարգում, շատ չեն այն հետազոտությունները, որոնք պնդում են վերջինիս արդյունավետությունը: Հետազոտողներ Ռոտզելը, Ջոնսը և Նյումենը (2010) առաջարկել են լուռ ընթերցանության նոր տարբերակ ՝ հետևյալ 4 բաղադրիչներով, որտեղ ուսուցիչը.

1. ուղղորդում է աշակերտին համապատասխան գիրք ընտրելիս
2. հորդորում է աշակերտին՝ կարդալ տարբեր ժանրեր, մեկ կամ երկու ժանրի փոխարեն

65 Hasbrouck, J. (2006). For Students Who Are Not Yet Fluent, Silent Reading Is Not the Best Use of Classroom Time. American Educator, Summer 2006, 30(2). http://www.readingrockets.org/strategies/choral_reading

66

67 Fuchs, D., Fuchs, L., & Burish, P. (2000). Peer-Assisted Learning Strategies: An Evidence-Based Practice to Promote Reading Achievement. Learning Disabilities Research and Practice, 15(2), 85-91. http://www.readingrockets.org/strategies/paired_reading

68 Kylene Beers 1957 “When kids can’t Read” A Guide for Teachers

3. հարցերի միջոցով պարզում է՝ արդյոք հասկացել է բովանդակությունը
4. աշակերտի հետ միասին ստուգում է առաջընթացը:

Մեթոդական ուղղություններ

Մինչ ընթերցանությունը կարելի է նախօրոք հարցնել, թե ինչ գիտի աշակերտը տվյալ թեմայի մասին, իսկ ավարտից հետո հարցնել, թե ինչ կապ ուներ կարդացածը նախօրոք իմացած տեղեկության հետ:

Կարելի է նախօրոք սովորեցնել և բացատրել կարևոր բառերը, ինչպես նաև հուշել իմաստը՝ համապատասխան հարցադրումների միջոցով. օրինակ՝ ո՞վ, ի՞նչ, ե՞րբ, որտե՞ղ, ինչու՞, ինչպե՞ս հարցերով: Կարելի է նաև բացատրել բարդ բառերը և միտքը, ինչպես նաև առանձնացնել կարևոր իմաստը և աշակերտի բառերով ներկայացնել իրեն:[69] Օրինակ՝ աուտիզմ ունեցող աշակերտին, ով ունի խոսք և կարող է պատասխանել, դասապրոցեսում ներգրավելու համար կարելի է առանձնացնել մեկ նախադասություն և տալ վերոհիշյալ հարցադրումներից մեկը, կամ նա կարող է ցույց տալ նկարի միջոցով:

Ուսուցողական տեխնիկաներ

Խմբային ընթերցանություն[70]

Նպատակը: Հնարավորություն ստեղծել դասարանում սովորող բոլոր աշակերտների համար՝ զարգացնելու կարդալու հմտությունները և ինքնավստահությունը սեփական ուժերի հանդեպ:

Դասարանը: Տարրական դասարաններ:

Անհրաժեշտ նյութեր: Դասագրքից տեքստեր:

Ընթացքը: Ուսուցիչը նախօրոք համոզվում է, որ դասարանում բոլորն ունեն ընտրված նյութը և կարող են կարդալ, այնուհետև բարձրաձայն կարդում է՝ համապատասխան արագությամբ և շեշտադրումներով: Հաջորդ անգամ աշակերտները միանում են ուսուցչին և միասին կարդում են: Այս տեխնիկան կարելի է կիրառել ինչպես անհատական, այնպես էլ մեծ և փոքր խմբային աշխատանքներում:

Քարտերով ընթերցանություն

Նպատակը: Երեխաների մեջ զարգացնել վարժ և ճիշտ կարդալու կարողությունը:

Դասարանը: Տարրական և միջին դասարաններ:

Անհրաժեշտ նյութեր: Քարտեր, կարդալու տեքստ, գրիչներ:

Ընթացքը: Ուսուցիչը կազմում է զույգեր, ինչպես նշված է «Ընթերցանություն ընկերոջ աջակցությամբ» տեխնիկայում և հանձնարարում զույգերին ընդգծել և թղթերի վրա գրել այն արտահայտությունները, որտեղ կան բարդ բառեր: Ավելի թույլ կարդացող աշակերտը կարդում է քարտերի վրա գրված արտահայտությունները, իսկ զույգի մյուս անդամը գտնում է սխալները և նշում:

69 http://www.readingrockets.org/article/strategies-promote-comprehension

70 Աղբյուրը՝ Kylene Beers 1957 “When kids can’t Read” A Guide for Teachers

Խառը պատմություն[71]

Նպատակը: Հնարավորություն տալ աշակերտներին՝ շարունակելու նախադասությունները

Դասարանը: Տարրական և միջին դասարաններ:

Անհրաժեշտ նյութեր: Փոքրիկ պատմություն՝ բաժանված մասերի և գրված առանձին քարտերի վրա:

Ընթացքը: Քարտերը բաժանել խմբերին, հանձնարարել աշակերտներին ուշադիր կարդալ և այնպես դասավորել, որ պատմության իմաստը վերականգնվի:

Թեյախմություն[72]

Այս մոտեցման հեղինակը Կեյլին Բիրսն է: Այն մեծ կիրառում է գտել Ամերիկայի Միացյալ Նահանգներում: Այս անվանումը ստացել է, քանի որ գործողությունները շատ նման են թեյախմության. աշակերտները զրուցում են, քննարկում և շարժվում սենյակում:

Նպատակը: *Հնարավորություն տալ աշակերտներին ծանոթանալու տեքստին՝ մինչ վերջնական կարդալը, կանխատեսել հետագա զարգացումները, համեմատել, գտնել կապերը, խթանել մասնակիցների ակտիվ մասնակցությունն ու հետաքրքրություն առաջացնել առաջարկվող նյութի նկատմամբ:*

Դասարանը: Բոլոր դասարանների համար:

Անհրաժեշտ նյութեր: Գրականությունից վերցված նյութ՝ բաժանված արտահայտությունների:

Ընթացքը: Քայլ 1: Ընտրված նյութից առանձնացնել արտահայտություններ, բառեր, նախադասություններ և գրել թերթիկների վրա, ընտրել այնպիսի արտահայտություններ, որոնք բնորոշում են կարևոր իրադարձությունները, հանգուցալուծումներն ու խնդիրները, և որոնք կարելի է մի քանի կերպ հասկանալ: Արտահայտություններն ու նախադասությունները կարելի է ընտրել աշակերտների թվի կեսով, դրանք կարող են կրկնվել:

Քայլ 2: Բաժանել թերթիկներն աշակերտներին և հանձնարարել, որ կարդալուց հետո մոտենան դասընկերներին և քննարկեն արտահայտությունները:

Քայլ 3: Աշակերտներին բաժանել 5 հոգանոց խմբերի, քննարկել, թե ինչի մասին է տեքստը, և գրառել դրանք՝ սկսելով հետևյալ նախաբանով «մենք կարծում ենք, որ …. Սա այն մասին է, թե ինչպես… »

Քայլ 4: Աշակերտները հաղորդակցվում են իրենց «մենք կարծում ենք» մտքերով և մեկնաբանում, թե ինչպես են եկել նման եզրահանգման:

Քայլ 5: Ուսուցիչը բարձրաձայն կարդում է տեքստը՝ սկսելով աշակերտներին արդեն լավ ծանոթ արտահայտություններից:

71 Guidelines for Adapting Instruction for Elementary Struggling Readers Doi: https://buildingrti.utexas.org/sites/default/files/resource_files/Guidelines_for_Adapting_Instruction_for_Elementary_Struggling_Readers.pdf

72 Աղբյուրը՝ Kylene Beers 1957 “When kids can’t Read” A Guide for Teachers

Նկար 10: Աշակերտները փորձարկում են վերոհիշյալ մոտեցումը:

Գրելու կարողության գնահատում և ուսուցանում

Դեռ տարրական դասարաններում աշակերտները կարող են ունենալ գրավոր խոսքի դժվարություններ: Ստուգելով աշակերտի արտասանությունը, տառաճանաչությունը և *դիտելով, թե ինչպես է գրում աշակերտը՝ ուսուցիչը կարող է պարզել, թե որտեղ է դժվարանում աշակերտը՝ ձայնավոր, բաղաձայն հնչյուններ, վանկեր, և դրանց համապատասխան կազմել առաջադրանքը*: Այս գործընթացը հետագայում կարող է լրջորեն կանխել գրավոր խոսքի խանգարումները:[73] Գրելու գործընթացի քայլերի վերաբերյալ տարբեր գիտնականներ տարբեր տեսակետներ են առաջարկում. ոմանք պնդում են 2 քայլի [74] մասին, ոմանք նշում են մինչև ինը,[75] իսկ մյուսները նշում են 5 քայլերը,[76] որոնք են՝ ***պլանավորելը, շարադրելը, վերանայելը, խմբավորելը և գրելը:***

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտները սովորաբար գրավոր աշխատանքից առաջ նախօրոք չեն պլանավորում այն մտքում. դա պայմանավորված է այն հանգամանքով, որ դժվարանում են խմբավորել նախադասությունները: Այստեղ նրանք կարող են օգնության կարիք ունենալ և ուսուցիչը պետք է ուղղորդի նրանց գրաֆիկների և հարցերի միջոցով: Ընդհանուր առմամբ ուղղագրական, քերականական, կետադրական սխալները թույլ չեն տալիս այս երեխաներին արտահայտել իրենց մտքերը, նրանց համար դժվար է կենտրոնանալ պատմության վրա, մտքերը ցրված են և կիսատ: Նույն աշակերտների համար բանավոր պատմելը շատ ավելի հեշտ կլինի, քան գրավորը, այդ իսկ պատճառով մինչ մտքերը

73 http://www.readingrockets.org/article/simple-ways-assess-writing-skills-students-learning-disabilities

74 (Elbow, 1981)

75 (Frank, 1979).

76 Englert, Raphael, Anderson, Anthony, and Stevens (1991

գրավոր արձանագրելը՝ բավականին արդյունավետ է սովորեցնել աշակերտներին նախ մտքում պլանավորել, ապա գրի առնել: Արդի մանկավարժության մեջ լայն կիրառում ունեն գրաֆիկական ուղեցույցները, որոնց կիրառումն օգնում է աշակերտներին կազմակերպելու իրենց մտքերը և հիշելու քայլերի հաջորդականությունը: Ստորև ներկայացված է գրաֆիկի ձևաչափի օրինակ:



Հուշող գրաֆիկ

Տեքստի անվանումը Զբոսանք

Որտեղ մանկական զբոսայգում

Երբ կիրակի օրը

Ով ես ու մայրիկս

Գործողություն գնացել էինք զբոսնելու

Ավարտ մենք զբոսնեցինք, հետո մեքենայով վերադարձանք տուն

Նկար 11: Ռեսուրսային դասասենյակում լոգոպեդը աշխատում է աշակերտի գրելու կարողության վրա:

Շարադրում: Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտները սկսում են աշխատանքը հենց այս փուլից, նրանք մտածում են թեմայի մասին և առանց պլանավորելու միանգամից սկսում գրել այն, ինչ մտածում են: Այս փուլի զարգացման համար աշակերտներին կարելի է սովորեցնել՝ օգտագործել նկարագրական իմաստ ունեցող բառեր, պարզ բառերի փոխարեն օգտագործել բարդ բառեր, միացնել պարզ նախադասությունները և դարձնել բարդ նախադասություններ:

Վերանայում: Այս փուլը բավականին բարդ է բոլոր աշակերտների համար, մանավանդ նրանց, ովքեր ունեն կրթության առանձնահատուկ պայմանների կարիք. նրանք սովորաբար գերադասում են միանգամից անցնել գրելուն: Այս հմտությունը երեխաների մեջ ամրապնդելու համար մի շարք հետազոտողներ խորհուրդ են տալիս առանձնացնել մեկ կարևոր նախադասություն և զարգացնել այն: Օրինակ՝ կարելի է վերցնել հետևյալ նախադասությունը. «Աղջիկը մտավ տուն և տեսավ, որ տանն ինչ-որ տարօրինակ բան է պտտվում», այնուհետև զարգացնելով նախադասությունը՝ շարադրել հետևյալ կերպ. «Աղջիկը վաղ առավոտյան գնացել էր անտառ՝ զբոսնելու: Հաճելի ամառային օր էր, աղջիկը վազվզեց թիթեռների հետևից, ծաղիկներ հավաքեց և մութն ընկնելուն պես որոշեց վերադառնալ տուն:

Մտնելով տուն՝ աղջիկը մեծ զարմանք ապրեց. տան մեջ ինչ- որ տարօրինակ բան էր պտտվում, աղջիկը հավաքեց իր ուժերը և մոտենալով պատուհանին՝ տեսավ փոքրիկ ծիծեռնակին, որը տուն էր մտել բաց պատուհանից»:

Խմբավորել (խմբագրել): Աշխատանքը վերջացնելուց հետո ուսուցիչը հանձնարարում է աշակերտներին ստուգել աշխատանքը, եթե նախորդ փուլում շեշտը դրվում է շարադասության վրա, ապա այս փուլում կենտրոնանում են ուղղագրության,

կետադրության վրա: Երբեմն աշակերտներին ավելի հեշտ է լինում առաջին անգամ ստուգել գրածի ուղղագրությունը, երկրորդ անգամ վերընթերցել՝ կետադրությունը ստուգելու համար: Աշակերտներին այս փուլում աջակցելու համար կարելի է կիրառել հետևյալ քայլերը.

- աշակերտներին հանձնարարել բարձրաձայն կարդալ գրված շարադրությունը
- առանձնացնել և դուրս գրել կարևոր և բարդ բառերը
- սովորեցնել օգտվել բառարաններից
- խրախուսել աջակցող տեխնոլոգիաների կիրառումը
- դասասենյակում փակցնել ուղղագրական, կետադրական կանոնները:
- Ուղղագրություն

Ինչպես կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող, այնպես էլ մյուս աշակերտներն ուղղագրության հետ կապված դժվարություններ են ունենում: Ուղղագրական սխալների հաղթահարմանն ուղղված միջամտությունը սկսվում է աշակերտի կողմից հաճախ թույլ տրվող սխալները պարզելուց: Ուսումնասիրելով աշակերտի գրավոր աշխատանքը՝ ուսուցիչը կարող է պարզել, թե արդյոք սխալները կապված են կանոնների հետ, կա՞ն արդյոք բառեր, որոնք հաճախ են սխալ գրվում, արդյո՞ք սխալները կապված են անուշադրության հետ, արդյո՞ք դրանք լեզվին անլիարժեք տիրապետելու հետևանք են: Աշխատանքը ստուգելուց հետո ուսուցիչը զրուցում է աշակերտի հետ և փորձում հասկանալ, թե նա ինչ սկզբունքով է առաջնորդվել: Ամփոփելով այս տեղեկությունները՝ ուսուցիչը պլանավորում է հետագա դասավանդումը: Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտների համար հաճախ շատ դժվար է լինում մտապահել բոլոր բառերի ուղղագրությունը, նրանց հետ աշխատանքում ավելի նպատակահարմար է միաժամանակ սովորեցնել քիչ թվով բառեր, օրինակ՝ օրական 2-3 բառ: [77]

Ուղղագրության բարելավմանն ուղղված տեխնիկաներ

Վիզուալիզացիա: Գրատախտակի կամ թղթի վրա ուսուցիչը գրում է այն բառը, որն աշակերտը սխալ է գրում: Աշակերտը բարձրաձայն կարդում է բառը, հետո կարդում է տառերով և գրում թղթի վրա: Այնուհետև ուսուցիչը հանձնարարում է աշակերտին նայել բառին և «լուսանկարել» այնպես, կարծես նրա աչքերը լուսանկարչական սարք լինեն, որից հետո փակում է աչքերը, մտովի պատկերացնում տառերը և բարձրաձայն արտասանում: Վերջում աշակերտը գրում է բառը և ստուգում ուղղագրությունը:[78]

Ֆերնալդի մեթոդ[79]

- Ուսուցիչը գրատախտակին գրում է բառը և բարձրաձայն արտասանում:
- Աշակերտները նայում են գրատախտակին և մի քանի անգամ բարձրաձայն կրկնում:
- Ուսուցիչը ժամանակ է տալիս աշակերտներին սովորելու բառերը. եթե աշակերտի մեջ զգայական ընկալումն է զարգացած, ապա մատիտով նկարում է, իսկ աշակերտը մատով անցնում է տառերի վրայով:
- Ուսուցիչը ջնջում է բառը և հանձնարարում աշակերտներին՝ վերհիշելով գրել դա:
- Ոսուցիչը գրում է բառը երրորդ անգամ և հանձնարարում դրանով տարբեր նախադասություններ կազմել:
- Վերջում աշակերտներին հանձնարարվում են տարբեր գրավոր վարժություններ:

77 http://www.readingrockets.org/article/spelling-and-students-learning-disabilities

78 Աղբյուրը՝ Sharon Vaughn, Candace S. Bos Strategies for Teaching Students with Learning and Behavior Problems

79 Նույն տեղում

Վերջաբան

Ամփոփելով՝ կցանկանայի անդրադառնալ այն հարցին, որն ամենից շատ էր քննարկվում ուսուցիչների հետ հանդիպումների ժամանակ. արդյոք ճիշտ է, որ հաշմանդամություն կամ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաները սովորեն հասակակիցների հետ նույն դասարանում, թե ավելի ճիշտ է, որ նրանք սովորեն հատուկ հաստատություններում: Մեր կարծիքով դա յուրաքանչյուրի ընտրությունն է. եթե երեխան ամեն օր գալիս է դպրոց և մտնում դասարան, ուրեմն դա նրա ընտրությունն է: Առնչվելով տարբեր խանգարումներ ունեցող երեխաների հետ՝ կարող ենք միանշանակ ասել, եթե երեխան չցանկանա հաճախել դպրոց, ոչ մի ծնող, որքան էլ պահանջկոտ և խիստ լինի, չի կարող ստիպել նրան: Այլ հարց է, որ դպրոցները, որդեգրելով ներառականության քաղաքականություն, պարտավոր են պատրաստել ուսուցիչներին և ստեղծել այնպիսի պայմաններ, որտեղ յուրաքանչյուր երեխա կզգա իրեն ընդունված և կստանա իր կարիքներին համապատասխան որակյալ կրթություն: Իսկ այն ուսուցիչներին, ովքեր արդեն իսկ առնչվում են կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների հետ, խորհուրդ կտայի հենվել երեխայի հետաքրքրությունների և ուժեղ կողմերի վրա, և որ ամենակարևորն է՝ ունենալ այնպիսի սպասումներ, որոնք երեխան ի վիճակի կլինի արդարացնել: Երբեմն նույնիսկ ծանր հաշմանդամություն ունեցող երեխային կարելի է ընդգրկել խմբային աշխատանքներում. նա կարող է ոչինչ չհասկանալ բովանդակությունից, բայց իր հնարավորության սահմաններում մասնակցելով խմբային աշխատանքին՝ կդառնա այդ խմբի մի մասնիկը:

Յուրաքանչյուր փոքրիկ հաջողություն կարող է մեծ նշանակություն ունենալ երեխայի և իր ծնողների կյանքում: Ուստի, մենք՝ մանկավարժներս, պիտի կարողանանք յուրաքանչյուր երեխայի մեջ տեսնել այն լուսավոր և ուժեղ կողմերը, որի միջոցով նա հնարավորություն կունենա դրսևորել իրեն, քանզի կարծում եմ՝ մենք բոլորս հասարակական էակներ ենք, և մեր բոլորի միակ տեղը ներառական հասարակությունն է:

Հավելված 1

Առաջընթացի գնահատման ձևաչափի օրինակ, որը ստեղծվել և կիրառվել է «Համագործակցային մոտեցումը ներառական կրթության մեջ» պիլոտային ծրագրի շրջանակներում, ինչպես նաև կիրառվում է «Աուտիզմ ազգային հիմնադրամի» «Իմ ուղին» ուսումնավերականգնողական կենտրոնում:

Մշտադիտարկում: Սովորողի առաջադիմության գնահատման աշխատանքային գործիք: *1. Ամսաթիվ: ____/____/____ Դիտարկում _____*
2. Ամսաթիվ ____/____/____ Դիտարկում _____
3. Ամսաթիվ ____/____/____ Դիտարկում _____

Հավելված 2

Հանդիպման ամսաթիվ:

Աշակերտի անուն ազգանուն:

Աշակերտի դասարան:

Դասղեկ:

Դպրոց:

Աշխատանքային խմբի մասնակիցների անունները:

1.Աշակերտի ուժեղ կողմերը:Կարճ նկարագրել աշակերտի ուժեղ կողմերը:

2.Դժվարությունների նկարագրություն շրջանակի մեջ վերցրեք առավել համապատասխան ցուցանիշը:

Ակադեմիական
Կարդալ, գրել, արտասանություն, մաթեմատիկա, պատմություն, այլ _____

Վարքային
Ագրեսիա, ուշադրություն, առաջադրանքի կատարում, տնային աշխատանք, հաճախում, դանդաղաշարժություն, այլ _____

Սոցիալական/հուզական
Դեպրեսիա, անհանգստություն, շփում, սոցիալական նորմեր, այլ _____

Առողջական
Գլխացավեր, քնկոտություն, մարմնի հոտ, սրտխառնոց, դեղերի ազդեցություն, այլ _____

3.Հավաքական տվյալների ամփոփում վերոհիշյալ խնդիրներից յուրաքանչյուր դաշտի համար:

4.Դժվարությունների/խնդիրների դասակարգում ըստ առաջնահերթության

#1 Առավել խնդրահարույց դժվարություն _____

#2 Պակաս խնդրահարույց դժվարություն _____

#3 Խնդրահարույց դժվարություն _____

5. Խնդրի ներկայացումը չափելի և գնահատելի ցուցանիշներով:

6. Նպատակի ձևակերպում:

7. Ամփոփիչ միջամտության նկարագրություն

- Աշակերտի հետ ինչպիսի միջամտություն է իրականացվելու:
- Երբ և որքան հաճախ պետք է իրականացվեն համապատասխան միջոցառումները:
- Ո՞վ է պատասխանատու միջամտությունն իրականացնելու համար:
- Ինչպես է գնահատվելու առաջընթացը:
- Ո՞վ է պատասխանատու առաջընթացի գնահատման համար:
- Ե՞րբ և ինչպես պետք է զեկուցել առաջընթացը:

8. Հաջորդ հանդիպման ամսաթիվը:

Դեպքի վարման ձևաչափի լրացված տարբերակ

Հանդիպման ամսաթիվ: 24.10.16

Աշակերտի անուն ազգանուն

Աշակերտի դասարան: III դասարան

Դասղեկ: Բարսեղյան Հայկուհի

Դպրոց: N163 հիմն. դպրոց

Աշխատանքային խմբի մասնակիցների անունները: Պետրոսյան Վարուժան, Գասպարյան Տաթևիկ, Ներսիսյան Նարեկ.

1.Աշակերտի ուժեղ կողմերը (2-3 բոպե)

Սիրում է նյութակրությունը, նրգում է, ուզում է ինքնուրույն լուծել: Սիրում է աշխի մեկնել, դրսումկրությունը մեզ տալիս:

2.Դժվարությունների նկարագրություն (շրջանակի մեջ վերցրեք առավել համապատասխան ցուցանիշը) (2 բոբպե).

Ակադեմիական

Կարդալ, գրել, արտասանություն, մաթեմատիկա, պատմություն, այլ _____

Վարքային

Ագրեսիա, ուշադրություն, առաջադրանքի կատարում, տնային աշխատանք, հաճախում, դանդաղաշարժություն, այլ _____

Սոցիալական/հուզական

Դեպրեսիա, անհանգստություն, շփում, սոցիալական նորմեր, այլ _____

Առողջական

Գլխացավեր, քնկոտություն, մարմնի հոտ, սրտխառնոց, դեղերի ազդեցություն, այլ _____

3.Հավաքական տվյալների ամփոփում վերոհիշյալ խնդիրներից յուրաքանչյուր դաշտի համար (2- 3 բոպե).

դժվարանում է թեմատիկ կապակցել, գրել, կարդալ բնագրային գործողություններ: Պատճառն է անպատրաստությունը հերթականությամբ կատարում է ճնշում ուսուցչուհու ցուցումով:

4.Դժվարությունների/խնդիրների դասակարգում ըստ առաջնահերթության (2-3 բոպե).

#1 Առավել խնդրահարույց դժվարությունը կարդալ, գրել

#2 Առավել խնդրահարույց դժվարությունը փնտրել առանցքային բառերի կապարում

#3 Առավել խնդրահարույց դժվարությունը թեմատիկ դժվարություններ

5. Խնդրի ներկայացումը չափելի և գնահատելի ցուցանիշներով (2 բոպե).

Գրավոր կարդում է բառ.
Միայն թեմատիկ դժվարանում է փնտրել առանցքային բառերը կարդալ:

6.Նպատակի ձևակերպում (2 բոպե).

Կկարողանալով ուսուցում թեմատիկ հնչյուն տարբերակել բառերում. բնութագրանշանները: Մինչև դասընթացի 20-ը կկարդա բառի փոխարեն բառ:

7.Ամփոփիչ միջամտության նկարագրություն (10 բոպե)

I. Ինչ պետք է անի աշակերտը. շարադրական 3 անգամ դասընթաց հնչյուն ուսուցում թեմատիկ հնչյուն ցուցումով:

II. Երբ և որքան հաճախ պետք է իրականացվեն համապատասխան միջոցառումները.

Շարադրական 3 անգամ.

III. Ով է պատասխանատու միջամտությունը իրականացնելու համար.

Դասընթացավարը

IV. Ինչպես է գնահատվելու առաջընթացը. Կկիրառվի առաջադիմության գնահատման ցուցիչ

V. Ով է պատասխանատու առաջընթացի գնահատման համար.

Դասընթացավարը

VI. Երբ և ինչպես պետք է զեկուցել առաջընթացը.

Եռամսյական 1 անգամ հանձնարարների հանձնումով:

8.Հաջորդ հանդիպման ամսաթիվը:

Նոյեմբերի 15

Հավելված 3

Դասարանում վարքի նկարագրման և գնահատման թերթիկ

Անուն, ազգանուն_____Դասարան_____Ամսաթիվ_____

Օր/ժամ	Դասաժամ	Գործունեություն	Վարք	Հետևանք	Նշումներ
		Առաջադրանք ☐ Խմբային աշխատանք ☐ Տեղափոխում ☐ Այլ ☐	Կատարում է առաջադրանքը ☐ Խոսում է ☐ Հանգիստ շարժումներ է կատարում ☐ Հայացքը բացակայում է ☐ Նայում է ուրիշներին ☐ Այլ ☐	Նկատողություն է ստանում ☐ Դասասենյակից դուրս է գալիս ☐ Առանձնացվում է ☐ Այլ ☐	

Օր/ժամ	Դասաժամ	Գործունեություն	Վարք	Հետևանք	Նշումներ
		Առաջադրանք ☐ Խմբային աշխատանք ☐ Տեղափոխում ☐ Այլ ☐	Կատարում է առաջադրանքը ☐ Խոսում է ☐ Հանգիստ շարժումներ է կատարում ☐ Հայացքը բացակայում է ☐ Նայում է ուրիշներին ☐ Այլ ☐	Նկատողություն է ստանում ☐ Դասասենյակից դուրս է գալիս ☐ Առանձնացվում է ☐ Այլ ☐	

Օր/ժամ	Դասաժամ	Գործունեություն	Վարք	Հետևանք	Նշումներ
		Առաջադրանք ☐ Խմբային աշխատանք ☐ Տեղափոխում ☐ Այլ ☐	Կատարում է առաջադրանքը ☐ Խոսում է ☐ Հանգիստ շարժումներ է կատարում ☐ Հայացքը բացակայում է ☐ Նայում է ուրիշներին ☐ Այլ ☐	Նկատողություն է ստանում ☐ Դասասենյակից դուրս է գալիս ☐ Առանձնացվում է ☐ Այլ ☐	

Հավելված 4

Ուսուցման եղանակների գնահատում

Այս թեսթի միջոցով կարելի է պարզել, թե աշակերտն ինչպես է ավելի լավ ընկալում և մշակում տեղեկատվությունը: Պետք է յուրաքանչյուր հարցի մոտ նշել առավել հարմար պատասխանը: Արդյունքները պահվում են գաղտնի:[80]

	Հաճախ	Երբեմն	Հազվադեպ
1.Ես թեման ավելի լավ եմ հիշում, եթե դրանից հետո նորից բացատրում են և քննարկում ենք:			
2. Ինձ համար ավելի հեշտ է, երբ հանձնարարված դասը համառոտ ներկայացվում է գրատախտակի վրա:			
3. Ես սիրում եմ գրառումներ անել՝ հետո վերանայելու համար:			
4. Կցանկանայի, որ դասարանում լինեին պաստառներ, մոդելներ, իրական նմուշներ:			
5. Ես դժվարանում եմ հասկանալ դիագրամները, գրաֆիկները կամ ուղղորդող նշանները:			
6. Ինձ հաճելի է ձեռքերով աշխատելը կամ առարկաներ պատրաստելը:			
7. Ինձ հետաքրքիր է աղյուսակներ և գրաֆիկներ գծելը:			
8. Ես կարող եմ միանգամից կռահել, երբ կրկնվում են հնչյունները:			
9. Թեման ավելի լավ եմ կարողանում հիշել,երբ մի քանի անգամ գրում եմ թղթի վրա:			
10. Ես հեշտությամբ կարողանում եմ հասկանալ ուղղությունները և հետևել դրանց քարտեզի վրա:			
11. Առարկաները ես ավելի լավ եմ սովորում լսելով:			
12. Ես միշտ խաղում եմ գրպանիս մեջ եղած մետաղադրամներով կամ բանալիներով:			
13. Ես ավելի լավ եմ անգիր անում՝ խոսքերը բարձրաձայն կրկնելով, քան թղթի վրա գրելով:			
14. Ես նորություններն ավելի լավ եմ հասկանում՝ թերթում կարդալով, քան ռադիոյով լսելով:			
15. Սովորելու ժամանակ ես միշտ ինչ-որ բան եմ ուտում:			

80 Chris Perakis , The Shadow Teachers Handbook, Athens, 2012-13

16. Ես կարծում եմ, որ ինչ-որ բան հիշելու համար այն պետք է պատկերացնել:			
17. Ես ավելի հեշտ եմ սովորում բառերի ուղղագրությունը, եթե մատներով գրում եմ դրանց վրայով:			
18. Ես ավելի լավ հասկանում եմ դասը կամ ելույթը լսելով, քան դասագրքում նույն նյութի մասին կարդալով:			
19. Ես լավ եմ աշխատում խճանկարներով ու լաբիրինթոսներով և հեշտությամբ լուծում եմ հանելուկները:			
20. Սովորելու ժամանակ սեղմում եմ ձեռքս ընկած առարկաները:			
21. Նախընտրում եմ ռադիոյով լուրեր լսել, քան թերթ կարդալ:			
22. Ես նախընտրում եմ կարդալ՝ հետաքրքիր նորություններ իմանալու համար:			
23. Շփվելիս ես միշտ դիպչում եմ զրուցակցիս:			
24. Ես ավելի լավ հետևում եմ բանավոր հրահանգներին, քան գրավորներին:			

Միավորները հաշվելու կարգը

Պատասխանի «հաճախ» տարբերակի դեպքում երեխան վաստակում է 5, «երբեմն» պատասխանի դեպքումfi3, «հազվադեպ» պատասխանի դեպքում 1 միավոր: Ստորև նշված են հարցերի համարները: Յուրաքան համարի դիմաց գրեք համապատասխան միավորը:

Տեսողական (վիզուալ)	Լսողական	Շոշափելի (տակտիլ)
Համար Միավոր	Համար Միավոր	Համար Միավոր
2	1	4
3	5	6
7	8	9
10	11	12
14	13	15
16	18	17
19	21	20
22	24	23
VPS =	APS =	TPS =

VPS = տեսողական (վիզուալ) նախընտրության գնահատական
APS = լսողական նախընտրության գնահատական
TPS = շոշափողական (տակտիլ) նախընտրության գնահատական

Տեսողական (վիզուալ) հիշողությամբ սովորողները նախընտրում են զննել բոլոր ուսումնական նյութերը: Նրանց դասավանդելիս խորհուրդ է տրվում.

- օգտագործել գծապատկերներ, քարտեզներ, նկարահանումներ, նշումներ, տեսանյութեր և քարտեր:
- Պետք է փորձել գլխում առաջացած գաղափարներն ամրապնդել տեսողական և պատկերավոր բառերով:

Լսողական հիշողությամբ սովորողները սիրում են օգտագործել աուդիո նյութեր. դրանք օգնում են նրանց մտապահել կամ վերհիշել ամբողջ նյութը: Նրանց պետք է խորհուրդ տալ՝

- լսելու հետհ ամատեղ գրառումներ կատարել և հ աճախակի վերանայել դրանք
- դասի նյութի մասին խոսել այլ աշակերտների հետ:
- դասարանում կամ դահլիճում այնպիսի տեղ նստել, որտեղից կարելի է ավելի լավ լսել
- նորություններ կարդալուց հետո ամփոփել կամ պատմել բարձրաձայն:

Շոշափողական (տակտիլ) հիշողությամբ սովորողները արտասանելիս մտքում պատկերացնում են բառերը: Նյութը լավ սովորելու համար նրանց պետք է.

- այն մի քանի անգամ գրել թղթի վրա
- տեղեկատվությունը լսելիս գրառումներ կատարել
- դասարանումստացածտեղեկությունըկապելիրականկյանքիհիրադարձությունների հետ
- գիտելիքները ամրապնդել դերային խաղերի միջոցով:

Օգտագործված գրականության ցանկ

Ավագյան Ա., Գրիգորյան Ա., Թադևոսյան Է. և այլք, Լոգոպեդիան գործնականում,- Ուսումնամեթոդական ձեռնարկ, Երևան 2017:

Առողջապահության համաշխարհային կազմակերպության կողմից հրապարակված Հիվանդությունների միջազգային դասակարգում, Տասներորդ վերանայումը (ՀՄԴ-10 Հավելված ՀՀ էկոնոմիկայի նախարարի 2013թ. սեպտեմբերի 19-ի N 871-Ն հրամանի Doi: http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=86263:

ՀՀ ՕՐԵՆՔԸ «ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Doi: http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=94683:

ՀՀ-ում ներառական կրթության իրականացման գնահատում, 2013: Կրթական հետազոտությունների և խորհրդատվությունների կենտրոն: Doi: http://www.osf.am/wp-content/uploads/2013/11/Inclusive-education-report_ARM-without-tools.pdf

Թադևոսյան Ս. Անհատական ուսուցման պլանի մշակման,- մեթոդական ուղեցույց-ձեռնարկ, Երևան, 2016:

ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ ԵՐԵԽԱՅԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ Հավելված N 1 ՀՀ կառավարության 2016 թ. սեպտեմբերի 29-ի նիստի N 38 արձանագրային որոշման: Doi: http://mlsa.am/wp-content/uploads/2016/11/38-32.1ardz.voroshum.doc:

Approximation of Inclusive Education in Armenia to International Standards and Practices, Policy Paper, A. Anapiosyan, Yerevan 2014:

Ayllon, Teodoro. How to Use Token Economy and Point Systems. 2nd ed. Austin, Texas: Pro-Ed, 1999:

Beers, G. Kylene 1957 -“When kids can’t Read” A Guide for Teachers 6-12 Carr, 1994 Journal of Applied Behavior Analysis:

Cecil R. Reynolds, PhD Randy W. Kamphaus, PhD. Attention-Deficit/Hyperactivity Disorder (ADHD): DSM-5™ Diagnostic Criteria https://images.pearsonclinical.com/images/assets/basc-3/basc3resources/DSM5_DiagnosticCriteria_ADHD.pdf:

Children with Disabilities THE STATE OF THE WORLD’S CHILDREN 2013 EXECUTIVE SUMMARY. Doi: https://www.unicef.org/publications/files/SOWC2013_Exec_Summary_ENG_Lo_Res_24_Apr_2013.pdf:

Chivers, M. (1991). “Definition of Dysgraphia (Handwriting Difficulty). Dyslexia A2Z. Retrieved from http://www.dyslexiaa2z.com/learning_difficulties/dysgraphia/dysgraphia_definition.html

Chris Perakis , The Shadow Teachers Handbook, Athens, 2012-13:

ClassWide Peer Tutoring. 2007. U.S. DEPARTMENT OF EDUCATION. WWC Intervention Report. Doi: https://ies.ed.gov/ncee/wwc/Docs/InterventionReports/WWC_CWPT_070907.pdf:

Evelyn Johnson, Ed.D. Student Assessment - Universal Screening. Doi: http://www.rtinetwork.org/component/content/article/26/429-assessment-universal-screening-q4:

Fluency. First Grade Teacher Reading Academy. University of Texas. Doi: https://buildingrti.utexas.org/sites/default/files/documents/1TRA_Fluency.pdf:

Fuchs, D., Fuchs, L., & Burish, P. (2000). Peer-Assisted Learning Strategies: An Evidence-

Based Practice to Promote Reading Achievement. Learning Disabilities Research and Practice, 15(2), 85-91. Doi: http://www.readingrockets.org/strategies/paired_reading:

Hasbrouck, J. (2006). For Students Who Are Not Yet Fluent, Silent Reading Is Not the Best Use of. Doi: Classroom Time. American Educator, Summer 2006, 30(2). http://www.readingrockets.org/strategies/choral_reading:

Jeanne Segal, Ph.D., and Melinda Smith, M.A. Last updated: September 2018. Doi: https://www.helpguide.org/articles/add-adhd/teaching-students-with-adhd-attention-deficit-disorder.htm:

Keenan K. Development of Physical Aggression from Early Childhood to Adulthood. In: Tremblay RE, Boivin M, Peters RDeV, eds. Tremblay RE, topic ed. Encyclopedia on Early Childhood Development. Published January 2012. Doi: http://www.child-encyclopedia.com/aggression/according-experts/development-physical-aggression-early-childhood-adulthood.

LDA of California and UC Davis M.I.N.D. Institute "Q.U.I.L.T.S." Calendar 2001-2002. Doi: http://centeroninstruction.org/:

Michael L. Bloomquist, Steven V. Schnell. 2002. "Helping Children with Aggression and Conduct Problems: Best Practices for Intervention":

Robert LaRue, PhD, BCBA-D Associate Director of Behavioral and Research Services, Douglass Developmental Disabilities Center Rutgers University. Doi: https://www.asatonline.org/research-treatment/clinical-corner/functional-analysis/:

Sharon Vaughn Candace S.Bos Strategies for Teaching Students with Learning and Behavioral Problems:

Salvia/Ysseldyke/Bolt Assessment in Special and Inclusive Education 11Th Edsition:

STRATEGIES FOR PROMOTING POSITIVE BEHAVIORS: Reinforcement. 2013. The Center for Advanced Study of Teaching and Learning (CASTL) at the University of Virginia, Charlottesville. Doi:http://curry.virginia.edu/uploads/resourceLibrary/Reinforcement_VKRP.pdf:

Strickland, D. S., Ganske, K., & Monroe, J. K. (2002). Supporting struggling readers and writers: Strategies for classroom intervention 3-6. Portland, ME: Stenhouse:

Strategies for promoting social skill learning.Inovatiev tailored Learning.Powered by Hunter tafe.Doi: https://itafe.huntertafe.edu.au/pluginfile.php/4516/mod_resource/content/1/CHCEDS003%20E2%20Handout%205%20Strategies%20for%20promoting%20social%20skill%20learning.pdf:

Thomas R. Kratochwill, Rachel DeRoos, Samantha Blair, University of Wisconsin-Madison. Classroom Management. Teachers Modules. Doi: http://www.apa.org/education/k12/classroom-mgmt.aspx:

The Influence of Emotional Intelligence of Secondary School Teachers on Classroom Discipline Strategies. Journal of American Science, 2011;7(7)

Koralek, D., & Collins, R. (1997). Tutoring Strategies for the Primary Grades.

Koskinen, P. & Blum, I. (1986). Paired repeated reading: A classroom strategy for developing fluent reading. The Reading Teacher, 40(1)

Topping, K. (1995). Paired reading, spelling and writing: The handbook for teachers and parents. Continuum International Publishing Group.

Էլեկտրոնային կայքեր

https://cerebralpalsyresource.weebly.com/teaching-strategies.html

https://www.cerebralpalsy.org/about-cerebral-palsy/sign-and-symptoms

http://adhd-institute.com/assessmhttps://ldaamerica.org/types-of-learning-disabilities/dysgraphia/, ent-diagnosis/diagnosis/dsm-5/

http://www.rtinetwork.org/learn/what/whatisrti

https://www.understood.org/en/learning-attention-issues/getting-started/what-you-need-to-know/difference-between-learning-disabilities-and-learning-and-attention-issues

https://www.progressmonitoring.org

https://resourced.prometheanworld.com/types-of-summative-formative-assessment/

https://www.parentingscience.com/social-skills-activities.html

https://www.autismclassroomresources.com/setting-events-in-data-collection-step/

https://www.autismspeaks.org/what-autism/treatment/applied-behavior-analysis-aba

https://www.thoughtco.com/classroom-procedures-and-routines-2081571

https://www.autismspeaks.org/what-autism/diagnosis/dsm-5-diagnostic-criteria

http://www.readingrockets.org/article/reconsidering-silent-reading

http://www.readingrockets.org/article/strategies-promote-comprehension

http://www.readingrockets.org/article/simple-ways-assess-writing-skills-students-learning-disabilities

http://www.pbis.org/school/pbis-in-the-classroom/classroom-pbis-practices

https://study.com/academy/lesson/token-economy-in-the-classroom-definition-examples-quiz.html

https://ldaamerica.org/types-of-learning-disabilities/

https://dyslexiaida.org/definition-of-dyslexia/

Նշումների համար

Սյուզաննա Պետրոսյան

Ներառական կրթությունը գործնականում

(ուսումնամեթոդական ձեռնարկ)

Մասնագիտական խմբագիր՝
մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ
Արմենուհի Ավագյան
Խմբագիր՝
բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Լաուրա Մուրադյան

Շապիկի նկարում՝ «Իմ ուղին» ուսումնավերականգնողական կենտրոնի սաներն են, ովքեր հաճախում են ներառական դպրոց և իրենց հնարավորությունների սահմաններում հաջողություններ գրանցում: